

ՏԱԳՆԱՊԱԿ ՄԵԾԱՑ

Գեղեցկի Սոաքել

ՏԱԳԼԱՊԱՎ ՄԵԾԱՑ

Գեհենի Առաքել

Խմբագիր Տ. Բաբայան,
Մտահաղացումը Վարդան Հովհաննիսյան

Գեղ ձևավորող Վ. Հովհաննիսյան
geheniaraqel@gmail.com

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ

Այս գրքույկի հրապարակումը կայացավ այն ժամանակ, երբ Հայաստանում մոլեգնում էր քաոսը, խուճապը, անորոշությունը ապագայի հանդեպ ու պատերազմի պարտությունը, սակայն այս ամենից ավելի սարսափելին դավաճանությունն ու ազգադավությունն էր, իշխանության ու պետական այրերի կողմից հակահայկական հիստերիան էր, որի արդյունքը կապիտուլյացիան էր: Մեր թշնամին՝ ներքին թշնամու հետ ձեռք - ձեռքի տված հասցրեցին այս աղետալի վիճակին: Իմ ընթերցասերներից շատերը ծանոթ են իմ նախորդ գրքերին, որտեղ զգուշացրել եմ եկող աղետի մասին, սակայն հետևություն չանելով հասանք այս օրհասական վիճակին: Այնպես չէ, որ հնարավոր չէ հաղթահարել այս վիճակը,դրա համար կան ազնիվ ու հայրենասեր մարդիկ, որոնք օժտված են մարդկային այնպիսի հատկություններով, որոնք կարող են ազատագրել ոչ միայ մարդուն, այլև քաղաքակրթությունները: Այդ պատճառով այդպիսի մարդկանց շնորհիվ կյանքի է կոչվում այն նախագծերից մեկը, որը մեր ազգային փրկության բանալին է, միակ երաշխիքը՝ «ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ »: Ինչպես փորձառու հոգեբան, բազմիցս եմ գրել և խոսել պետություն, բանակ, երկիր ու հասարակություն կառուցելու մասին, ցույց եմ տվել ոչ միայն սխալները, այլև ճըշմարիտ ճանապարհը: Իսկ ինչու՞ պարտվեցինք, նախ այս հարցի պատասխանից է կախված, թե մենք կարո՞ղ ենք հաղթահարել այս դժվար փորձությունը, թե նորից շարունակելու ենք ականջալուր չլինել ճշմարտությանը: Նախ ինչ-որ բան կառուցելու համար, պետք վերլուծել սխալները, արժեքավորել սուտն ու կեղծիքը, զատել այն ու աշխատել չկրկնել նախորդ սխալները, անկախ նըրանից, թե դրա վերացման հետևանքները ինչպիսի ջանքեր ու անգամ զոհեր է պահանջելու: Պետք է նախ և առաջ արժեքավորել ո՛չ միայն ազգային արժեքները, այլև պետք է ձերբազատվել կեղծիքից, ստից, ստախոսներից ու ստախոսությունից:

Չեմ կրկնի այն տողերը, որոնք կկարդաք այս գրքույկում, սակայն

մեր ժողովրդի միակ փրկությունը դա Ազգային գաղափարախոսությունն է: Ես շատ եմ գրել Ազգային գաղափարախոսության մասին, ունեմ գաղափարակից շատ բարեկամներ, որոնք հենց այս՝ « ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ » կուսակցության կազմում պետք է իրականացնեն մեր երազանքների հայրենիքը: Չեմ փորձի փակագծեր բացել, սակայն ճանաչում եմ մարդկանց, որոնք ազգային գաղափարները կյանքի կոչելու համար ստիպված են այս կուսակցական դրոշի տակ հավաքվել: Կարծում եմ շատերդ գիտեք, որ ես կուսակցական չեմ, և չեմ սատարում կուսակցականամոլությունը ու կուսակցականաշինությունը, սակայն ինչպես գիտեք Հայաստանում անհատները ու խելացի մարդիկ չեն կարող հավակնել իշխանության պաշտոններին, եթե կուսակցական չեն կամ նրանց արբանյակը, կամ էլ նրանց խնամի-ծանոթ-բարեկամը: Դա հատուկ արվել է այն նպատակով, որպեսզի թայֆայականությունը ու կլանային օլիգարխիան դարձնեն կառավարման ձև, որպեզի ժողովրդին բաժանեն խմբերի ու բանակների, որպեսզի ազնիվ մարդը չկարողանա երբեք դառնալ պետության ղեկավար, որպեսզի միայն գումարին զոհ դարձած ճիվաղները կարողանան անխոչ պետական սանդուղքով մագլցեն վերև: Ուստի մի խումբ հայրենասեր մարդկանց շնորհիվ այս «Սոցիալ-Իրավական Հավասարություն » կուսակցությունը ծնունդ է առնելու, որպեսզի փոխի այս ամենը, այն ինչը կործանել է մեր երկիրը, ինչը խաթարել է մեր անդորրը: Պետք է կառուցենք նոր հասարակարգ, նոր մտքեր ու գաղափարներ, բայց մնալով ազգային արժեք ների պահապանը: Չեմ կարող չխոստովանել, որ ինձ առաջարկվել է լինել այդ խորհրդի կազմում, սակայն չի նշանակում, որ անկուսակցական լինելով կարող եմ առաջարկություններ ու ծրագրեր առաջարկել: Ես չեմ լինելու կուսակցության մեջ, սակայն իմ գաղափարներն ու ծրագրերն են լինելու այնտեղ, իմ լավ ընկերների ու բարեկամների հետ միասին: Հայաստանին հարկավոր է ազգային գաղափարներով հարուստ ազգային գործիչներ, որովհետև երեսուն տարի ապազգային ազգադավների իշխանության շնորհիվ էր այս աղետի պատճառը:

Առաջարկում եմ իմ ընկերներին միանալ ոչ միայն կուսակցությանը, այլ իրենց գաղափարներով ու ծրագրերով, առաջարկություններով լրացնենք եղածը։ Սոցիալ-Իրավական հավասարության մասին խոսել են մեր Մեծերը՝ Թումանյանն ու Նժդեհը, Խորենացին ու Ռաֆֆին, այնպես որ միացեք մեր Մեծերին, նրանց գաղափարները կյանքի կոչելու։ Այս գրքույկում տեղ են գտել տարբեր ժամանակներում գրված իմ փոքրիկ պատմություններն ու մտքերը, որոնք կարող են ձեռնարկի պես ծառայել՝ կողմնորոշվելու, թե ինչպե՛ս ու ինչպիսի՛ մարդկանց հետ պետք է երկիր ու ապագա կառուցել։ Շնորհակալություն ի զեն իմ բարեկամներ։

Գեհենի Առաքել 10.04.2021

Խոովութիւնս ամբոխից

ԵՐԱՋՈՒՄՍ ՄԻ ՀԵՐՈՍ,
ՄՈՏՍ ԵԿԱՎ ՀԱՐՑՄՈՒՆՔՈՎ

ԶՈՐԱՎԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՄԱԿԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

« Երբ իրիկունը գլուխներդ բարձին դնեք, որ քնանաք,
մի քիչ մտածեք ձեր ազգի մասին »:
Անդրանիկ Օզանյան

— Առաքե՛լ, Առաքե՛լ, արթնացի՛ր... Առաքելը բացեց աչքերը և զարմացած կողքերը նայեց, սենյակը ողողված էր ծիրանագույն լույսով:
Առաքելը տեսավ լույսի մեջ ողողված մարդուն,
— Ես եմ, Առաքե՛լ, մի վախեցիր...
— Ես չեմ վախենում, — նա ճանաչեց դիմացը նստած զորավարին, — Զորավար Դու՞ք եք...
— Այո՛, տղաս ես եմ, տեսնում եմ ճանաչեցիր...
— Այո Զորավար, ինչպե՞ս կարող եմ չճանաչել, երբ Ձեր ասածի պես, ամեն անգամ գլուխս բարձին դնելուց առաջ մտածում եմ մեր ժողովրդի, մեր երկրի ու Ձեր մասին...
— Գիտեմ որդիս, դրա համար էլ եկա քեզ մոտ, — զորավարը ժըպ-

տաց, — Առաքել թուղթ ու մատիտ ունե՞ս, կարո՞ղ ես մի նամակ գրել...
— Այո Զորավար, կարող եմ...
— Դե պատրաստվիր, կասեմ թե ինչ գրես։
Առաքելն արագ ելավ, վերցրեց թուղթն ու գրիչը։
— Պատրաստ եմ Զորավար...
— Դե՛ գրի, « Զորավար Անդրանիկ Օզանյանի նամակը հայ ժողովրդին », — Առաքելը սկսեց արագ-արագ գրի առնել, — գրի, որ ես՝ Անդրանիկս, նվիրված լինելով հայրենիքիս ու ժողովրդիս, նույնիսկ մեռած ժամանակ անարգվում եմ այս ապերախտ ժողովրդի կողմից։ Դեռևս 1920 թվականին էր, երբ Հայաստանի Ազգադավ իշխանությունները սկսեցին դավեր նյութել, հետապնդել և հալածել ինձ և իմ զինակիցներին, նրանց դավադրությունն ու թշնամությունը ստիպեցին ինձ, իմ մարտիկների հետ հեռանալ հայրենիքից։ Այդ նույն ազգադավների ժառանգները իմ հանգիստը խանգարելով, իմ աճյունը Ֆրանսիայի՝ Պեր Լաշեզից բերեցին Հայաստան... Այդ նույն ազգադավները մոլագար ոճրագործի մարմինը ամփոփեցին իմ և հերոս նահատակների կողքին, և ահա այդ ոճրագործ սրիկաները հիմա էլ ծաղրում են ողջ Եռաբլուրի նահատակներին ու մեր հերոսներին։
— Զորավա՛ր, իսկ այս նամակը ու՞մ պետք է տամ, — ընդհատեց նա։
— Ժողովուրդին տղաս... Ապերախտ ժողովրդին...
— Բայց Զորավար, ոչ ոք չի հավատա, որ իմ ձեռքով գրված նամակը, Ձեր նամակն է։
— Գիտեմ տղաս, դու գրի, այդ անհավատ ժողովուրդը երբեք էլ չի հավատացել ճշմարտությանը՝ ո՛չ ինձ, ո՛չ Խորենացուն, ո՛չ Նժդեհին, ո՛չ էլ Գաղափարի մարտիկներին, որոնք աղաղակում են այսքան տարի... Առաքել տղաս, ես գիտեմ քո գրած « Ազգադավի » մասին։ Դու կարողացար ժամանակի մեջ տեսնել այն ամենը ինչ բոլորն են տեսնում, սակայն լռում են, դա ամենամեծ հանցանքն է. տեսնել ու լռել... Այնպես որ տղաս գիտեմ, որ չեն հավատալու, բայց դու գրի, գոնե այս նամակս դառնա վիրավոր սրտիս սփոփանք, որ մի գուցե այս նամակից ծնունդ առնեն Թեհլերյաններ ու

Նաիրի Հունանյաններ...
— Ծարունակե՞նք Զորավար։
Զորավարը սկսեց թելադրել,
— Գրի՛, ո՞վ էր ձեզ խնդրում, որ իմ աճյունը Ֆրանսիայի Պեր Լաշեզ հանգստարանից տեղափոխեիք Երևան։ Ես իմ կտակում պարզ գրել էի տվել, որ կուզենայի հանգչել Ազատ, Անկախ Հայաստանում, ոչ թե ճորտերի ու ստրկամիտ մարդկանց երկրում, երկրում որտեղ նվաստացնում են ու ահաբեկում, որտեղ խոշտանգում են կենդանի ու նահատակված հերոսներին, դեռ քիչ էր, որ հաշմանդամներին ու ողջ մնացածներին են նվաստացնում, հիմա էլ անցել են նահատակներին, մի՞թե մենք դրան էինք արժանի... Ես ազգադավներին չեմ մեղադրում, նրանք միշտ էլ եղել են։ Ես մեղադրում եմ ժողովուրդին, որոնք լռությամբ հանդուրժում են այս ամենը... Լուռ ու խոնարհ ծեծվում են ու բռնաբարվում, լռությամբ՝ տանելով ստրկության լուծը, ես չեմ կարող հանգիստ ննջել, որովհետև ոճրագործը շարունակում է հերոսների կողքին մնալ... Ամեն անգամ գալիս են մարդիկ ու խոնարհվում նրա գերեզմանին, փառաբանում են նրա հերոսությունն ու մեծությունը։ Մանուկները գալիս են ու երդվում նրա գերեզմանին՝ նրա գործը շարունակելու համար, նրանք անգամ չգիտեն, որ այդ « սպարապետ » կոչված տականքը արդեն վաղուց դժոխքում է, և իրենց երդումներն ու մեծարումը չի լսում։
— Կներեք Զորավար, որ ընդհատում եմ, եթե Վազգենը դժոխքում է, այն ժամանակ ո՞վ է խանգարում Ձեր հանգիստը...
— Տղաս, մի կարծիր, որ մարդիկ մեռնում են և դրանով ավարտվում է կյանքը, մենք շարունակում ենք ապրել և լսել հանդերձյալ կյանքում, դա իհարկե ոճրագործներին ու հանցագործներին չի վերաբերվում, որովհետև նրանք խավարի թագավորությունում են, նրանք ո՛չ լսում են, ո՛չ տեսնում, նրանք այրվում են այնտեղ... Իսկ ես չեմ կարող հանգիստ ննջել, երբ Եռաբլուրի հարյուրավոր հերոսների հառաչանքներն եմ լսում, երբ լսում եմ խոշտանգված ժողովրդի լացը։ Խանգարում է խաբված սերունդի ներկայությունը, որոնք գալիս են ու երդվում մարդասպանի գերեզմանին,

չիմանալով անգամ, որ նա ազգի ամենամեծ թշնամին է... Ինչքան գիտեմ այդ ոճրագործին կենդանության ժամանակ ասել են Փրջոտ ոջլոտ...
— Այո՛, Զորավար այդպես են ասել...
— Ա՛յ, տեսնում ես նա կենդանության ու մեռած ժամանակ մնաց նույն փնթի ոջլոտը, ոչինչ չփոխեց, միայն մարդիկ փոխվեցին՝ իրենց հիշողություններից ջնջելով նրա իրական կերպարը, նրանք սկսեցին երկրպագել տականքին...
— Հասկանալի է Զորավար, շարունակենք, — առաջարկեց նա:
— Գրիր տղաս, որ իմ կենդանության օրոք շատ տառապանքներ ու դավաճաններ տեսա, սակայն հիմա տեսնում եմ հազարապատիկը, որովհետև այդ ազգադավները շատացան բարենպաստ պայմաններում: Հայտնվելուն պես Ֆրանսիայում՝ Պեր Լաշեզում, ուրախ էի, որովհետև շիրիմիս այցելում էին միայն հայրենասեր մարդիկ, իսկ այստեղ գալիս են գեներալներ ու զինվորականներ, որոնք թշնամու բանակին ավելի են օգնել, քան թե սեփական ժողովուրդին... Նրանք այցելում են իրենց ոճրագործ քավորին, երկու թասով օղորմաթաս խմում ու փառաբանելով նրա մեծությունը՝ հեռանում են: Ու ես մեծ ցավ եմ ապրում, տեսնում եմ խաբված մանուկներին ու պատանիներին, ցավ եմ ապրում, որովհետև ժողովուրդը լռեց, փոխարենը խոսեցին տականքները, որոնք հերոսացրեցին ոճրագործին, սրիկանները բարձրացան հարթակ: Քի՞չ էր, որ մարդասպանի ներկայությամբ խանգարեցիք մեր անդորրը, հիմա էլ ծաղրում են մեզ՝ բոլոր նահատակներիս:
Ոճրագործի պատկերով մեդալով ժողովուրդը անարգեց իրեն, ո՛չ թե ինձ, իրենց լռության ներքո կատարվեց այդ ամենը... Մի ազգ, որը չգիտի գնահատել իր արժեքները՝ լինելու է դատապարտված հավիտյանս հավիտենից... Եռաբլուրի նահատակված հերոսների նզովքը ծանր է նստելու Ժողովրդի վրա: Տղաս, գրի թող ժողովուրդը իմանա, որ ես այսօրվանից հրաժարվում եմ Զորավար, Ազգային հերոս տիտղոսից, ինձ հարկավոր չէ այն ազգի հերոսը լինել, որը անարգում է իր հերոսներին, իր պատմությունը, բարոյականությունն ու արժեքները... Նահատակներին անարգելը ամ-

ենամեծ ոճրագործությունն է... Առաքել, գրիր ամիս ամսաթիվը և ավելացրու. « Անդրանիկ Օզանյան, Երևան »:
Զորավարը հրաժեշտ տվեց Առաքելին և հեռացավ՝ առանց թողնելու որևէ պատգամ, նա հիասթափված էր:

Գեհենի Առաքել 27/02/2015

« Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում»: Անդրանիկ Օզանյան

« Ամեն հայ, եթե միմիայն իր համար ապրելու մասին չմտածեր, մեր աղետների մեծ մասը պակաս կլիներ »: Անդրանիկ Օզանյան

«Եթե կուզեն ինձ պատիվ անել, ես իմ արձանը չեմ ուզում, փառավոր թաղում չեմ ուզում: Թող հայ ժողովուրդը կանգնեցնի ավերակ դարձած Առաքելոց վանքը և այնտեղ փոքրիկ ուսումնարան կառուցի հայ մանուկների համար: Այս է իմ ամբողջ բաղձանքս և բարոյական պահանջս հայ ժողովրդից»: Անդրանիկ Օզանյան

« Եթէ այս անգամ ցաւը զիս տանի, մարմինս օտար հողի վրայ չթողո՛ւս... Անպայման Հայաստան փոխադրէք: Նուարդին փղձկումին վրայ, եթե կարելի չըլլայ փափաքս իրագործել, մարմինս Վառնա տարէք եւ թաղեցէք քրոջս՝ Նազելիի, գերեզմանին քով »: Անդրանիկ Օզանյան

« Գործս կիսատ մնաց...» (օգոստոսի 31. 1927. Անդրանիկի վերջին խոսքերը մահվանից առաջ)

ՐԱՖՖՈՒ ԿՈՉ ՊԱՏԳԱՄԸ

«Ներկայումս գիրքը և ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելը այն փրկարար միջոցներից մեկն է, որ կազատե նորան շատ մոլորություններից։ Մի լավ գիրքը կարող է փրկել մի ամբողջ ազգ »։

Ռաֆֆի

Լռությունը խախտեց լսվող ոտնաձայները։ Առաքելը վառեց մահճակալի մոտի լույսը. դիմացը՝ աթոռին նստած էր բոլոր ժամանակ ների մեծությունների՝ մեծությունը։

— Առաքե՛լ, արթնացրի՞, — կամաց շշնջաց նա։

— Ճիշտն ասած քնած չէի, Վարպետ, — զարմացավ նա։

— Կներե՛ս, չէի ուզում անհանգստացնել, հիմա կասես. ի՞նչ է մեռելներից պրծում չունեմ, անցած անգամ Անդրանիկը, հիմա էլ սա՛, — կատակեց նա։

— Ո՛չ, ինչ եք ասում, Վարպե՛տ, ինչպե՞ս կարող եմ այդպես մտածել, Դուք այն մեծությունն եք, որի հետ անգամ զրուցելը երազանք է...

— Գիտեմ տղաս, սակայն սա երազ չէ, — ասաց Ռաֆֆին։

— Դու գիտես, որ մենք հանդերձյալ աշխարհում հանգիստ չուն-

ենք, քանի դեռ մեր ժողովուրդն ու երկիրը գնում են կործանման ճանապարհով...
— Վարպետ գիտեմ, ես զգում եմ, որ Ձեր անդորրը ևս խանգարվել է: Զորավարը ասել էր, որ իրենք ևս ահաբեկված ու խոշտանգված են...
— Առաքել, չգիտեմ ինչպես արտահայտվեմ, որպեսզի կարողանաս պատկերացնել...
— Վարպետ Դուք ասեք, ես պատկերացնում եմ, ինչպես հարկն է, — ասաց Առաքելը, — ես գիտեմ, որ Դուք մտահոգված եք... Արտահայտվեք, դա կթեթևացնի Ձեր հոգում կուտակված մաղձը, ես նույն դրության մեջ եմ, այնքան ասելու բան է կուտակվում, որ քիչ է մնում պայթեմ: Ստիպված գրում եմ, որպեսզի կարողանամ ազատվել այդ ծանր բեռից, չեմ կարողանում ներսում պահել: Բարի մարդիկ կարդում են և արձագանքում... Վարպետ, իրենք նույն տառապանքներն ու դժբախտությունը կիսում են ինձ հետ, քանի որ իրենք հալածված են ազգադավների կողմից:
— Առաքել, գիտեմ տղաս, ես էլ երիտասարդ ժամանակ քեզ պես էի, փորձում էի թղթին հանձնել այն ամենը, ինչ կուտակվում էր իմ մեջ, ինչ-որ պիտի ասեի ժողովրդին ու սերունդներին... Սակայն ավա՜ղ, ոչինչ չկարողացա անել, դրանք մնացին միայն թղթի վրա ու եղան անպետք...
— Այդպես մի ասեք, Վարպետ, — դժգոհեց Առաքելը, — ինքս Ձեր աշակերտն եմ, Դուք կարողացաք դաստիարակել մի սերունդ, որը կարողացավ պետություն կերտել, կարողացավ պատերազմ հաղթել...
— Առաքել հաղթելը դեռ քիչ է տղաս, այդ հաղթանակը պահել է պետք...
— Համաձայն եմ Վարպետ, Ձեր ամեն մի գրած մարգարեություն ընդունում եմ, որպես սեփական գաղափար...
— Գիտեմ տղաս, դու և ես նույն կաղապարում ենք ձուլվել, — կատակեց Ռաֆֆին, — Առաքել, գիտե՞ս, երբ ազգադավը գլուխ է բարձրացնում, չպետք է վախենալ, չպետք է խոնարհվել, չպետք է խղճալ ու նահանջել... Ազգադավին խղճալ, կնշանակի սեփական

գերազմանը փորել...
— Վարպետ, ես գրել եմ դրա մասին, — ասաց Առաքելը։
— Գիտեմ տղաս, գիտեմ, մենք՝ նահատակներս հպարտանում ենք և հանգստություն զգում, որ դեռ կան ազնվազարմ հայրենասեր մարդիկ, որոնք գիտեն ճշմարտության ճանապարհը, ու վստահ եմ, որ ճիշտ ճանապարհի վրա ես։ Մենք հաճախակի հավաքվում ենք ու խոսում քո գրածների մասին...
— Վարպետ, կներեք, որ ընդհատում եմ։ Մենք ասելով, ու՞մ նկատի ունեք, եթե գաղտնիք չէ...
Ռաֆֆին ծիծաղեց։
— Առաքել ջան, մեզ մոտ՝ « Վերնատան », բոլոր անդամները՝ ես, Խորենացին, Մաշտոցը, Նարեկացին, Վարդան Զորավարն ու Նալբանդյանը, Աբովյանն ու Սևակը, Չարենցն ու Ծիրազը, Նժդեհը, Պապ թագավորը, Այգեկցին, Կոմիտասը, Սայրանն ու Փանոսը Թերլեմեզյան...
— Ուրեմն « Վերնատունը » կա՞...
— Այո՛ տղաս, հայ ժողովրդի հոգսերով ապրող մեծությունները այնտեղ են հավաքվում՝ « Վերնատանը », տեսնում ենք ու լսում ժողովրդի ձայնը։
— Վարպետ, բոլորդ միասի՞ն եք, զորավարներն ու գրողները...
— Այո՛ Առաքել, — հաստատեց Ռաֆֆին, — գիտե՞ս տղաս, բոլորը՝ ովքեր ազգի ոգով են ապրել, անկախ իրենց մասնագիտությունից ու կոչումից... Առաքել, եթե չեմ սխալվում դու բժիշկ ես չէ՞...
— Այո՛ բժիշկ եմ, Վարպետ...
— Տեսնու՞մ ես. բժիշկ, որը դարձել է ժողովուրդի քնարն ու աղաղակում է իրականության ու ոճիրների դեմ...
— Այո՛ Վարպետ, իրավացի եք, ես ինքս չեմ գրում, այլ գրիչն է գրում, դա սրտից դուրս ելած բառեր են, չգիտեմ, թե միտքն ու գաղափարը ինչպես է գալիս...
— Մուսան է դա տղաս, — ժպտաց Վարպետը, — մուսան ու ժողովրդի հառաչանքը միաձուլվում ու անկախ իրենից գրվում են տողերը։ Նարեկացին, Աբովյանն ու Նալբանդյանը այդ հառաչանքի աղաղակի ձայնից գրիչ վերցրեցին ու սկսեցին գրել։

Վարդան Սպարապետն, Անդրանիկն ու Նժդեհը իրենց սրով էին ճանապարհ հարթում, իսկ մենք՝ գրիչով: Սայրանն ու Փանոսը՝ վրձինով, Կոմիտասը՝ երգով Առաքել, ժողովրդի ձայնը չլսողը չի կարող երբեք արարել, անկախ նրանից, նա գիտնական է, թե հոգևորական, զինվորական, թե արվեստագետ...

— Վարպետ, իսկապե՞ս Դուք լսում եք մեր ձայնը, մեր այս հառաչանքներն ու աղոթքները:

— Այո՛ տղաս, լսում ենք և ողբում: Նարեկացին իր ողբով, Խորենացին իր մատյաններով, Կոմիտասն իր մեղեդիներով... Սակայն տղաս, ողբի ու արտասուքի մեջ նաև պայքարի մարտակոչեր կան: Նալբանդյանն ու Նժդեհը չեն դադարում ի զեն կոչել, Չարենցն ու Շիրազը, Տիգրան Մեծն ու Սեպուհը, Թեհլերյանն ու Մոնթեն. վրեժի, ցասումի պայքարի են կոչում:

— Վարպետ, ի՞նչ եք կարծում, այսպիսի վիճակից ինչպե՞ս կարելի է դուրս գալ...

— Առաքե՛լ որդիս, հարցը ինչու՞ տվեցիր, եթե դու գիտես պատասխանը...

— Չգիտեմ Վարպետ, պահ է գալիս՝ հուսահատվում եմ, անգամ իմ տեսածին ու գրածին չեմ հավատում: Դժվար է կողմնորոշվել այս քաոսի ու խառնաշփոթի մեջ: Վարպետ, խելագարվել կարելի է...

— Գիտեմ Առաքել, գիտեմ, դժվար է, գիտես ժողովուրդը կույր է և սնահավատ, այդ կուրության ու տգիտության արդյունք է, կույր են մտքով, քանզի կույր աչքը ավելի լավ է, քան կույր միտքը: Տգիտության այս շղարշը ծանրացել է: Նրանց մտքին միայն մշուշ է ու դատարկություն, իսկ դատարկության մեջ ոչինչ չի ստեղծվում: Առաքել, շարժում է պետք, մտածել ու գործել, որտեղ արագությունն ավելի նպաստաբեր է լինում, թեկուզ անհաջող փորձ, սակայն պետք չի, որպեսզի անգործությունից ժանգոտի միտքը, ժողովուրդը ասում է. « Երկաթը տաք-տաք են ծեծում »: Հարկավոր է գործել, ոչ թե սպասել, որ այդ մի բուռ եղած ընտրյալներին էլ ոչնչացնի բորոտը: Առաքել, գաղջը արդեն ամենուր է, անգամ սերունդն է ստրկամիտ ծնվում, էլ ուր մնաց պայքարելը... Չպետք

է կիսատ թողած գործը կանգնեցնել, հարկավոր է ավարտին հասցնել մինչև վերջ... Մինչև հաղթանակ...
— Գիտեմ Վարպետ, բազմիցս ասել եմ, որ այս թուլությունը, որը ցուցաբերում ենք մենք, փոխանցվելու է եկող սերունդին, արդեն այս սերունդը չգիտի, որ Հայաստանը ժամանակին եղել է ամենահզոր երկերից մեկը՝ իր գիտությամբ ու մշակույթի կրթօջախներով: Ներկան միայն ավերակ դարձած մշակույթի ակումբներ ու գրադարաններ, դպրոցներ ու մանկապարտեզներ: Նախկինում ամեն գյուղ ու ավան իր մշակույթի տունն ուներ, գրադարանը, թատրոնի ու երգի խմբակները, դրանք բոլորը ոչնչացրեցին, իսկ հիմա դրանց փոխարեն աղանդավորական ու կուսակցական շտաբներ են, որտեղ միայն բութ՝ « Կվալդ » դեմքով, կուսակցական նշանով դասաբներ ու աստվածապիղծ հոգևորականներ են:
— Իրավացի ես տղաս, այս ամենը մենք տեսնում ենք, ու ցավ ապրում, որ չկարողացանք կրթել ժողովրդին, որ պետք չի հավատալ ու աստվածացնել առաջնորդներին: Առաքել, անկախ նրանից, առաջնորդը լավն է, թե վատը, պետք է նրան հարգել և սիրել իր արժանիքներով, սակայն չպետք է աստվածացնել ու երկրպագել, եթե սկսեցին երկրպագությունը, ապա հավատացնում եմ, անգամ լավ առաջնորդը կարող է դառնալ բռնակալ, ինչպես ժողովուրդն է ասում. « Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ »:
— Վարպետ, Դուք իսկապե՞ս տեսնում եք ելքը:
— Առաքել, քո կարծիքով ինչու՞ եկա: Ճիշտն ասած Միքայել Նալբանդյանն էր ուզում գալ, Խորենացին ու Նժդեհը, սակայն գիտեյինք, որ դու ինձ էիր սպասում...
— Ծնորհակալ եմ Վարպետ, իրոք երազում էի այս հանդիպումը: Ինձ համար մեծ պատիվ է կանգնել ու լսել Ձեզ...
— Առաքել, ժամանակը սուղ է որդիս, պետք է գնամ, այդ պատճառով կասեմ այն ինչ անհրաժեշտ է, խնդրում եմ հիշիր ինչ կասեմ, կարող ես ընդունել, որպես պատգամ, թեկուզ կտակ...
— Ինչպես կասեք Վարպետ...
— Առաքել, դեռ 1914 - ին կանխագուշակում էինք մոտալուտ աղետը. ես, Նարեկացին ու մյուսները շրջում էինք գյուղից՝ գյուղ, աղ-

աղակում, որ աղետը մոտենում է, պետք է ոտքի կանգնել՝ զենք վերցնել, սակայն ապարդյուն, ոտքի ելան միայն նրանք, որոնք ծնվել էին ազատության ջահը սրտում, իսկ մնացածը քշվեցին Դեր -Զոր... Առաքել, ով ոտքի ելավ, զենք վերցրեց՝ նա ապրեց, ով գլուխ խոնարհեց՝նա կոտորվեց... Այդպես էլ հիմա է, որդիս: Ինչ կարևոր է, քո թշնամին թուրքերեն է խոսում, թե հայերեն, թշնամին՝ թշնամի է, ժողովրդի թշնամուն սպանելը մեղք չէ: Գիտե՞ս հրեաները ինչու՞ կարողացան հասնել հաջողության, որովհետև ընդունեցին իրենց տիրոջ խոսքը. «Նա, ով մեղանչում է ու խախտում Տիրոջ պատվիրաններից մեկնումեկը, այսինքն՝ անում է մի բան, որ չպետք է աներ, բայց չիմանալով գործում է, այդ մեղքը՝ ուրեմ մեղավոր է»: Բացի այդ, նրանց համար ոսկե օրենք դարձավ տիրոջ խոսքը. « Եթե քահանայի դուստրը պոռնկությամբ պղծվի, նա արատավորած կլինի իր հոր անունը. Նա պետք է հրով այրվի »: Առաքել, հրեաները դավաճանների ողջ գերդաստանին են պատժում՝ հասկանալով, որ նրա գործած հանցանքի համար անգամ նրա անմեղ ծնողն է մեղավոր: Տեսնում ես, իսկ մենք ներեցինք ազգադավներին, որպեսզի շատանան ու հոշոտեն ազգին: Առաքել, այստեղ գոյի պայքար է, այստեղ բարու և չարի պայքար է, այստեղ տեսակի պայքար է: Եթե չարը ոտքի է ելել ու կոտորում է մեզ, ուրեմն մի վարանի՛ր սուր վերցնել: Առաքել, գրիչը զենք է, զենք է երգը, զենք է նաև խոսքը... Տղաս, այսօր մեզ պետք է ռազմաշունչ երգ, ռազմաշունչ խոսք, սակայն երգում ենք ու ճառում, բայց չկա կիրք, պայքար և զենք... Անիմաստ է դառնում խոսքն ու երգը, երբ չկա զենք... Ազգադավի արյունը պետք է լինի որպես սրբագործված գործի սկիզբ: Արյունով պետք է մաքրվի ժողովրդի տառապանքն ու լացը: Հազարավոր մանուկների աչքերի արցունքները չորացել են նրանց այտերին ու մնացել անհատույց: Մնացել են տասնամյակներով ու կմնան, քանի դեռ պայքարը չի եղել նպատակային: Ինչու՞ ենք վախենում արյունից, եթե մեր թշնամին չի վախենում թափել մեր արյունը, չի վախենում, երբ խոշտանգում ու նվաստացնում է ժողովրդին, չի վախենում, որ գալու է այդ պատասխան տալու ժամանակը... Այն ժամ-

անակ դուք էլ մի վախեցեք թափել նրա արյունը, նրա զավակներին ու ժառանգներին ոտնատակ տալով, մի վախեցեք, որ մեղսագործվելու եք, քանի որ ժողովրդի թշնամու արյունը դա չի մեղսագործում, այլ մաքրում է: Սատանայի հետ դաշն կնքած ոճրագործին պատժելը մեղք չէ, այլ պատիվ: Թեհլերյանի պատգամը հիշի՛ր... Նա անհանգիստ է Առաքել, նա չի կարողանում հաշտվել այն մտքին, որ երիտ-թուրքերին փոխարինած ենիչերիները նվաճել են մեր երկրի պետականությունն ու խոշտանգում են բազմաչարչար մեր ժողովրդին: Առաքել, իմ և ողջ հայ ժողովրդի մեծերի ու նահատակների անունից եմ ասում, ու պատգամում. մի վախեցե՛ք, թող վախենա մեր թշնամին, մի վարանե՛ք, թող վարանեն մեզ խոշտանգողները, ո՛չ թե մեր արյունով այլ ազգադավների, ո՛չ թե մեր զավակները՝ այլ նրանց զավակները պետք է լացեն: Առաքել, ապրել մեկ անգամ, սակայն ապրել, ոչ թե ստրկանալ, ոչ թե աղերսել: Ապրել այս արևի տակ, որպես ազգ ու ժողովուրդ, որպես մարդ, ոչ թե որպես անասուն: Բանականությունը մեզ տրվել է, որպեսզի տարբերենք լավը՝ վատից, չարին՝ բարուց: Աստծուն՝ սատանայի, այնպես որ, տղաս, քանի դեռ ժողովուրդը չի գիտակցում, որ իր ստրկությամբ ստրկացնում է մեզ՝ իրենց մեծերին ու պատմությունը, ջնջում է Աստծու բարի կերպարը: Աստված մեզ՝ մարդկանց, ստեղծեց ազատ ու հպարտ, սակայն մենք չընդունեցինք Աստծուն, փոխարենը ստրկացանք սատանայի ու չարի առաջ: Այնպես որ, չարիքի դեմ պայքարը սուրբ պարտք է, մեռնել, եթե պետք է հպարտ, ոչ թե ոտքերի տակ, սակայն Առաքել չպետք է գնալ մեռնելու համար, այլ ապրելու... Եթե պայքարը պետք է լինի մեռնելով, ապա թող մեռնի մեր թշնամին, որպեսզի մենք ապրենք ու ապրեցնենք: Առաքել՝ որդիս, ավարտում եմ, քանի որ երկար խոսեցի... Ծնորհակալ եմ տղաս, չմոռանա՛ս պատգամս տալ ժողովրդին, սա իմ պատգամը չէ, այլ Խորենացու և Մաշտոցի, Նարեկացու ու Թումանյանի, Նժդեհի ու զորավար Բաղրամյանի, Չարենցի ու Սևակի... Առաքել, հրաժեշտ չեմ տալիս, քանի որ խոստանում եմ կրկին այցելել, սակայն վստահ եմ, որ Նալբանդյանի ազատության ոգին դեռ կա ժողովրդի մեջ:

Գիտեմ, որ մենք միասին կարող ենք ազատությունը նվաճել...
Մեր ոգին ձեզ հետ է: Պայքա՛ր, զե՛նք, կոի՛վ, հաղթանա՛կ... Մա՛հ մեր թշնամուն...
Ռաֆֆին հրաժեշտ տվեց և հեռացավ,այնպես աննկատ ինչպես եկել էր:

Գեհենի Առաքել 14/03/2015

« Փնտրեք հայի սուրն այնտեղ որտեղ հայի արյուն է թափվել »: Ռաֆֆի

« Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ, և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա »: Ռաֆֆի

« Այն բարերարները, որոնք միշտ կողոպտել են, հափշտակել են և հազարումեկ կերպ ավազակությամբ հարստություն են դիզել. և վերջ ի վերջո ցանկանում են լավ մարդ ձևանալ և իրենց կեղտոտ անցյալը ծածկել ազգասիրական քողով: Այս տեսակ «ազգասերը» սիրում է ազգը նրան կողոպտելու համար, որպես վամպիրը թմրեցնելով է ծծում իր զոհի արյունը »: Ռաֆֆի

« Դա մի սարսափելի եղեռնագործություն է, սպանել պատմությ- ո՛ւնը: Դա ամենամեծն է բոլոր հանցանքներից: Նրանք կամենում են ոչնչացնել մեր նախնյաց գործերը և հավիտենական մոռացության մե՞ջ թողնել մեր հայրենիքի հիշատակները, որպեսզի իրանց վատ գործերն ևս նրրանց հետ ծածկվեն, մոռացվեն և ապագայի համար ամոթի ու նախատինքի առարկա չդառնան »: Ռաֆֆի

ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՅՑԸ

Նա գալարվում էր մահճակալում, չէր կարողանում քնել:
Հանկարծ նկատեց դիմացը նստած ստվերը:
— Բարև Ձեզ, Դու՞ք եք, — զարմացավ նա:
— Այո՛ Առաքել ես եմ. Ճանաչեցի՞ր...
— Այո՛ Վարդապետ, իհարկե:
— Ի՞նչու, չե՞ս կարողանում քնել:
— Ճիշտն ասած սիրտս ալեկոծ է, Վարդապե՛տ, չեմ կարողանում քնել, — հուզված բացատրեց նա:
— Ի՞նչ է պատահել, տղաս:
— Վարդապետ, այսօր իմացա, որ սահմանի վրա վիրավորված զինվորը հաշմանդամ է դարձել, կարդացի, որ դրամ են հավաքում, որպեսզի նրա բժշկության ծախսերը հոգան...
— Այո՛, ցավալի դեպք է... Ես տեղյակ եմ, Առաքել...
— Ի՞նչ անենք, տեսնու՞մ եք, թե ինչ օրն ենք ընկել, որ մեր սահմանին կանգնած զինվորներն անօգնական են: Իսկ նրանք հայրենիքի համար են կանգնած ու արյուն են թափում այդ հայրենիքի համար, սակայն հայրենիքը նրանց մոռանում է և թողնում անօգնա-

կան...
— Առաքել, դա Հայրենիքը չի մոռանում նրանց, այլ ազգադավները, իսկ գիտե՞ս հայրենիքը որն է...
— Ո՞րն է:
— Հայրենիքը՝ մենք ենք՝ ձեր նահատակները, հայրենիքը դու՛ ես, և այն զինվորը, որը օգնության կարիք ունի: Մեր հողն ու ջուրն է, որը այլևս մերը չի... Իսկ քո ասածը հայրենադավներն են, որոնք խոշտանգում են ու նվաստացնում ձե՛զ էլ, մե՛զ էլ: Վաճառում են մեր երկրի հողն ու ջուրը:
— Գիտեմ Վարդապե՛տ, ես դրա համար հազար անգամ եմ ասել ու անգամ գրել:
— Առաքել, գիտեմ տղաս, դրա համար եմ այստեղ ու գիտե՞ս թե ինչու...
— Ինչու՞ ...
— Առաքել, երբ ժողովուրդը լռում է, մենք՝ մեռելներս ենք սկսում աղաղակել անարդարության դեմ, երբ կենդանի մարդիկ ոչինչ չեն անում, էլի մենք ենք աղաղակում ու ի զե՛ն կոչում... Գիտե՞ս ինչքան դժվար է հայրենյաց սիրո համար նահատակվածներիս համար: Վարուժանն էր ուզում գալ, Զոհրապն ու Թեհլերյանը: Բոլորը Առաքել, բոլորն էլ ցանկանում են այցելել ու ասել իրենց ապրումների ու վշտի մասին: Քո կարծիքով Անդրանիկն ու Ռաֆֆին հենց այնպե՞ս եկան, գնացին: Նրանք մեր բոլոր նահատակներիս ուղերձն էին բերել, ինչպես և ես... Մենք՝ մեռելներս, չենք կարող հանգիստ ննջել, երբ մեր ժողովրդի տականքը սուրն է դեմ տվել ժողովրդի կոկորդին: Մինչև ե՞րբ պետք է լռեք, երբ նահատակներն են արդեն աղաղակում, մի՞թե չեք լսում մեր ձայնը...
— Իհարկե լսում ենք, փորձում ենք ելք գտնել...
— Առաքել, այդպես լսել ու փորձել պետք չէ, հարկավոր է գործել տղաս, հիմա պետք է լռել ու գործել, քանի որ մեկ դար աղաղակեցիք ու արդյունքի չհասաք: Ցեղասպանությունը քարոզելով ու լուսանկարներով չպետք է ապացուցել, այլ պարտադրելով... Երեվի Նժդեհն ու Թեհլերյանը ավելի լավ կբացատրեն քան ես, սակայն ես, որպես հոգևոր մարդ հասկանում եմ, որ աղերսել ու աղո-

թել պետք չէ, երկաթե շերեփ է պետք տղա՛ս։ Երկաթե շերեփով չպետք է փայ փախցնել, այլ թշնամու գլխին պետք է հարվածել, ո՛չ միայն արտաքին, այլև ներքին։ Եթե ներքին թշնամու դեմ չենք պայքարում, ապա անօգուտ է պայքարել արտաքին թշնամու դեմ։ Ինքդ տեսնում ես, ինչ կարևոր է, քո ասած զինվորին թուրքերն են սպանում, թե հայ ազգադավները, երեկ ռազմական բժիշկ՝ Վահե Ավետյանին սպանեցին, այսօր էլ մյուս հայ զինվորին, ո՞րն է տարբերությունը. միևնույն է ոճրագործը՝ ոճրագործը է, նա պետք է պատժվի անկախ նրանից՝ հայ է, թե թուրք։

— Ես դա գիտեմ, Վարդապե՛տ, բայց ժողովուրդը չգիտի։

— Առաքել, բարոյական մարդիկ գիտեն, քանի որ նրանց բանականությունը Աստվածատուր է, իսկ մնացածը սատանայական են, ովքեր տեսնում են ու լռում, դառնում են սատանայի հանցակիցը։ Նրանք չարիքի հետ դաշինք ունեն, մեր սուրբ պարտքն է կռվել չարի ու սատանայի դեմ։

— Վարդապետ Դուք ասացիք որ նահատակները անհանգի՞ստ են, ուրեմն նրանք տեսնու՞մ են այս ամենը։

— Առաքել, մենք տեսնում ենք և լսում, ցավ ենք ապրում... Ցավ ենք ապրում մեր անցյալով, ցավ ենք ապրում այս ներկայով ու ողբում ենք մեր ապագայի համար... Գիտե՞ս, այս Անմոռուկը կպցնելով կրծքին, չեն հարգում մեր մեկուկես միլիոն նահատակներին, քանի որ հարգանքը կլիներ, որ ապրեին և ապրեցնեին, իսկ ինչ եմ տեսնում, միայն մեռնելու պատրաստ են, մեռնում են ու նվաստանում, ծեծվում են ու խոշտանգվում, աղաղակում են ու ոչինչ չանում... Մի՞թե դա է հարգանքը։ Մենք նահատակվեցինք՝ սխալ թույլ տալով, սակայն ժամանակը պետք է սովորեցներ ձեզ, որպեսզի չգործեիք մեր սխալը։ Երիտ-թուրքերն ու Երիտ-հայերը նույն կերպ են գործում՝ ծեծում են, խոշտանգում, հետո սրի ու հրի մատնում։ Ահա ինչ տեսնում եմ, մնացել է միայն Դեր-Զոր քշեն։ Առաքել, ցեղասպանությունը պարտադրում են թշնամուն, ոչ թե աղերսում, իսկ մինչ պարտադրելը պետք է ներքին թշնամուն պարտադրել, որպեսզի ընդունի բարոյականությունը, եթե չի ընդունում երկնային օրենքները, ապա թող դժողքի բաժին դառ-

նա։ Տերը ասում է.« Խոզերի առաջ մարգարիտներ շաղ մի՛ տրվեք»։ Այդ խոզերը հիմա անարգում են ու պղծում մեր ժողովրդի սրբությունները, և ցավալին այն է, որ մնում են անպատիժ։ Իսկ ինչու՞ դու չես ընդունում չարի իշխանությունը։
— Վարդապետ, ես և չարը չենք կարող համերաշխ լինել, քանի որ ինձ համար ընդունելի չէ սատանայությունը, ես քրիստոնյա եմ, հավատացյալ...
— Ա՛յ տեսնու՞մ ես, դու քրիստոնյա ես, բայց չես գործում որպես քրիստոնյա, քո հավատքն ու քո երկիրը, բարոյականությունն ու պատիվը պահելու համար միայն աղոթքով չպետք է պահես ու պաշտպանես այն, այլ զենքո՛վ, սրո՛վ, պատերազմելո՛վ։ Պետք է պարտադրես սատանային, չարը երբեք երկնային ու Աստծո խոսքը չի կարող ընդունել, ապա պետք է հալածել նրան։ Աստծո անունից պետք է ոչնչացնել նրան։ Չարիքը՝ չարիք է, անկախ դա սատանայի դեմքով է թե հրեշտակի... Հիսուսն ասել է. « Որ կգան սուտ առաքյալներ և տիրոջ անունով վկայություններ կտան, բայց դուք մի՛ խաբվեք նրանց »։ Առաքյալ, որտեղ սուրն է անում իր գործը՝ գրիչը անզոր է, սուր՝ սրի դեմ, պետք է կռվի, գրիչը՝ գրչի։ Հիշի՛ր « սուրը բարձրացնողը սրից է ընկնելու », դա Տիրոջ պատգամն է։ Տերը քո փոխարեն սուրը չի վերցնելու ու պատժի, նա դրա համար քեզ տվել է հոգի, ձեռքեր և բանականություն, դու պետք է պաշտպանես քո հավատքը, քո կյանքը, որը Աստված է շնորհել, ոչ մեկ իրավունք չունի քեզ զրկել կյանքից, դու պետք է պահպանես և պաշտպանես այդ կյանքը։ Մեկ դար է, կոկորդ եք պատռում, գրքեր հրապարակում, աղերսում երկրներից ու պետություններից, սակայն անարդյունք, մի՞թե չեք տեսնում, որ այդպես սխալ եք գործում։ Երբ քո պետության տականքն է հայտարարում, որ Թուրքիայից պահանջ չունի, և չի ունեցել, և այդքանից հետո հավատում եք նրան, որ նա ցավում է այդ ոճիրների համար։ Ես ինչպե՞ս հավատամ, երբ նա միջազգային բարձր ամբիոնից ծաղրում էր իր ժողովրդին, որ հալածում ու խոշտանգում էր այդ երկրի համար հաշմանդամ դարձած ազատամարտիկին, անտերության մատնում արյուն թափած զինվորին, նվաստացնում

սպանված զինվորի ծնողներին։ Մի՞թե այդ ամենը դուք չեք տեսնում, երբ մենք՝ մեռելներս ենք տեսնում դա... Բաղրամյան 26-ի դիմաց սպանված զինվորների մայրերի ճիչը ականջներիս մեջ է, երբ ոստիկան ասկյարները նրանց քաշ էին տալիս։ Ժողովուրդը անտարբեր էր, մոռանում են, որ իրենք նույնպես զավակներ ունեն, որ այդ նույն դժբախտությունը կարող է չոքել նաև իրենց դռանը։ Քո կարծիքով ինչու՞ մենք՝ մեռելներս, դիվադադար այցելում քեզ, ինչու՞ չենք կարող հանգիստ ննջել, մեկ դար է անցել, սակայն այդպես էլ հանգիստ չկարողացանք ննջել։ Չարիքը՝ չար իքին է հաջորդում, ազգադավը՝ ազգադավին։ Իրար փոխանցելով ոճրագործի կացինը՝ արմատախիլ են անում ազգին, իսկ գիտե՞ս թե ինչու...

— Ինչու՞ Վարդապետ,

— Որովհետև կացնի պոչը փայտից է Առաքել, մեզանից, մե՛ր մեջ է թշնամին, և կարող է իր հունձը անել անպատիժ։ Ինչպե՞ս կարողացաք ոճրագործներին թաղել հերոսների պանթեոնում, ինչու՞, ո՞ր մեղքի համար մենք այդ պատժին արժանացանք։ Երբ ազգադավ Դեմիրճյանը մեր մեծերի կողքին է, իսկ փոչոտ, ոճրագործը՝ հերոսների... Ի՞նչ է դա ծաղրանք չէ՞, Անդրանիկին քանի՞ անգամ պետք է սպանեք, մի՞թե չկարողացաք հասկանալ, որ անարգելով մեզ՝ դուք ձե՛զ եք անարգում, մեզ ծաղրելով՝ դուք ձե՛զ եք ծաղրում։ Չեք հասկանու՞մ, որ մեծությունների անեծքը և նզովքը ծանրանալու է ձեր սերունդների վրա։ Սատանային հանդուրժելը ինքն է սատանայանում, մի՞թե դա է եղել մեծերի պատգամը...

Մի՞թե դա է ձեր հավատքն ու սրբությունը... Տգիտությու՞ն, համատարած տգիտություն ու այդպիսի տգետների միջոցով ուզում եք երկիր ու պետություն կառուցե՞լ... Ո՞վ կարող է պատկերացնել, որ ցեղասպանությունից մազապուրծ փրկված ժողովուրդը նորից կդառնա ցեղասպանության զոհ։ Մի՞թե դա էր ձեր երազանքը՝ մորթվել, բռնաբարվել ու խոշտանգվել, ողջ աշխարհը ապրում է, իսկ դուք՝ մեռնում։ Մեռնում եք հոգով, քանի որ հոգին մեռնում է՝ չարին հանդուրժելով, չարի իշխանությունը ընդունելով։ Չարին ծառայելը անպատիժ չի մնա, քանի որ մորթվելու եք

հենց ձեր հնազանդության ու լռության համար, քանի որ հենց ձեր տերն է ձեզ խեղդելու, հենց նա է ձեր դեմ հանելու՝ ձեր զավակներին, նա է հանելու որդուն՝ հոր դեմ, հորը՝ զավակի ու այդպես պետք է հոշոտեք՝ ինքներդ ձեր պտուղի ձեռքով, քանզի ուրացաք Աստծո տված լույսը, քանզի ուրացաք Աստծո խոսքը, ճըշմարտության ճանապարհի փոխարեն ընտրեցիք դժոխքի ճանապարհը: Ապրել՝ ապրելու համար, ո՛չ թե մեռնել՝ մեռնելու...

— Վարդապետ, ես գիտեմ դա, ճշմարտությունը և ազատությունը Աստծո ամենամեծ պարգևն է, ես ընդունում եմ Աստծո խոսքը...

— Առաքել, Աստված երբեք ստրկամտության կողմնակից չէ, նա մարդուն կերտել է իր պես՝ ազատ ու հզոր, մարդիկ սատանային լսելով են ստրկանում, սատանային լսելով են իրենց համար կուռքեր, իշխաններ ընտրում: Աստված սիրում է ազատասերներին, քանզի նա չի սիրում երկու տիրոջ ծառայողներին: Ստրուկները տեղ չունեն դրախտում, քանի որ իրենց տեղը դժոխքն է, քանի որ սատանային են ծառայում: Աստված ասում է. « Ով որ մոտենա մի պիղծ սողունի կամ մի մարդու, որը պղծված է ամեն տեսակ պըղծություններով, ով որ դիպչի դրանց, թող անմաքուր համարվի, նրա մատուցված զոհաբերություններից չպետք է ուտի, մինչև որ իր մարմինը չլվանա »: Տեսնում ես չարիքի հետ սեղան նստողը ինքը ևս պղծվում է, ու ապականվում: Առաքել, ազատասեր մարդը չի կարող ստրուկ լինել, նա իր ազատության համար կռիվ է տալիս, ամեն միջոցով անգամ զենքով ու կռվով՝ պատերազմելով չարի իշխանության դեմ, նրանք մաքրվում են աղբից ու բորոտից: Նրանց Աստվածահաճո գործը երբեք անպատասխան չի լինելու... Առաքե՛լ, մարդիկ չպետք է պայքարեն Աստծո կամ դրախտի համար, այլ ապրելու և ապրեցնելու, պետք է ապրեն ուրախ և երջանիկ՝Աստվածահաճո, ոչ թե հացին կարոտելով՝ դժբախտության և հիվանդության մեջ: Խեղճ ու դժբախտ լինելը թույլ մարդու համար է, երջանիկ ու հզոր լինելը՝ Աստծո պարգևն է, սակայն, ինչպես տեսնում եմ այստեղ՝ Հայաստանում հակառակն է, սատանայի ճտերն են հարստության ու վայելքների մեջ ապրում, իսկ ինչու՞, որովհետև դուք եք այդպես թույլ տալիս, մինչդեռ նրանք պետք է

հալածվեին ու չերևային անգամ հասարակության մեջ, սակայն նրանք բեմերից բայաթի են կանչում և ուրախանում՝ շարունակելով համիդի կիսատ թողած գործը։ Հենց այդ Երիտ-հայերն են, որ ՄԱԿ-ի ամբիոնից պետք է հրաժարվեն մեր պահանջատիրությունից, հենց այդ երիտ-հայերն են, որ սպանված զինվորի մայրերին քաշ են տալիս փողոցներով, ահաբեկում ու ծեծում ժողովրդին, խոշտանգում ազատամարտիկներին, անօգնական թողնում հաշմանդամ դարձած զինվորին, նրանք են, որ ստրկացնում են ու տգետ սարքում նոր սերունդներին։ Հիմա ասա, թուրքի գործած ցեղասպանությունից ինչո՞վ է պակաս այս ցեղասպանությունը։
Ինչու՞ նրանք պետք է վայելեն մեր ժողովրդի արյուն, քրտինքով կառուցած ապարանքներն ու դղյակները... Ինչու՞... Գիտե՞ս։
Սողոմոն Թեհլերյանն էր ուզում գալ քեզ այցելության, վրեժով լի հոգին հանգիստ չի, նա ասում էր, որ ամեն մի անկյունում պետք է սատկացնել այդ տականքին, որպեսզի մնացածներին դաս լինի...
Ամեն պատի անկյունում մեկ օլիգարխ, ահա նրա պատգամը...
Ի՞նչ է այդքան անկյուն չկա՞ այս երկրում, մի՞թե Թամանյանի նախագծած Երևանում քիչ են այդ անկյունները։
— Վարդապետ, անկյունները բավարար են, ո՛չ միայն մեր տականքների, այլև մյուսների։
— Տեսնու՞մ ես Առաքել, անկյունները կան, օլիգարխները նույնպես, էլ ո՞ւմ եք սպասում, մի՞թե ոգին ու ջիղը չկա, մի՞թե ժամանակը չի պատժելու ոճրագործներին, մի՞թե սպասում եք, որ Դեր Զորը կրկնվի...
— Ո՛չ, Վարդապետ, չի կրկնվի, ես վստահ եմ, որ այդ օրը մոտ չէ...
— Հավատում եմ տղաս, հավատում եմ, գործել է պետք, մեր ոգին և Աստծո աջը ձեզ օգնական, Աստվածաշնչում ասվում է. « Զոհը պետք է ուտվի զոհամատուցման օրն ու հաջորդ օրը, և եթե որևէ բան մնա երրորդ օրվան, այն կրակով պետք է այրվի »։
Նա հրաժեշտ տվեց և հեռացավ։

Գեհենի Առաքել 21/03/2015

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Սենյակում լռություն էր, անգամ փողոցի անցնող մեքենաների շարժը լռել էր:
— Առաքել, լսու՞մ ես, — հանկարծ լռությունը խախտեց ձայնը,
— Այո՛, լսում եմ, — զարմացած ասաց նա,
Անծանոթը ստվերից դուրս եկավ և դանդաղ քայլերով մոտեցավ: Խավար լույսի տակ երևում էր, որ նա կարճահասակ էր, լայնաթիկունք ու մկանոտ, կարծես թե իր հասակն ու լայնքն մեկ լիներ: Նա մոտեցավ ու կանգնեց մահճակալի դիմաց, որտեղ մի քիչ լույս էր:
— Բարև Առաքել, եթե թույլ կտաք կնստեմ, — հարցրեց նա,
— Այո, իհարկե, նստեք խնդրեմ, — շփոթված առաջարկեց Առաքելը և ինքն էլ նստեց տեղերի մեջ, — Դուք ինձ կներեք այս վիճակով եմ:
— Այդ Դուք պետք է ինձ ներեք, քանի որ ես եմ Ձեզ այցելել, ոչ թե Դուք ինձ, — կատակով ասաց անծանոթը և ժպտաց, — Առաքել ինչպես նկատում եմ չճանաչեցիք.
— Կներեք, ճիշտն ասած չեմ կարողանում մտաբերել:
— Առաքել չեք կարող մտաբերել, որովհետև ինձ առաջին անգամ

եք տեսնում, ավելի լավ կլինի ներկայանամ, — ասաց անծանոթը:
— Խնդրում եմ, եթե դժվար չէ,
— Առաքել ես Տիգրանն եմ... Տիգրան Արտաշեսյանը, — ասաց նա,
— Ինչպե՞ս թե, — զարմացավ Առաքելը, անակնկալ էր հյուրի ասածը, — Դուք իսկապե՞ս Տիգրան Մե՞ծն եք,
— Այո տղաս, քո ասած Տիգրան Մեծը,— նա սկսեց ծիծաղել, Առաքելը ամիջապես ոտքի ելավ, — ոչինչ Առաքել, պառկիր...
— Ոչ, Արքա ինչպես կարող եմ Ձեր դիմաց...
— Առաքել, մենք պալատում չենք, այլ քո ննջարանում, այնպես որ խնդրում եմ մի հակառակվիր, եթե դեմ չեք, ես Դու-ով կդիմեմ, — մտերմաբար ասաց նա
— Ինչպես ասեք Արքա, կամքը Ձերն է
— Այդպես լավ է Առաքել, ես ընկերական զրույցի համար եմ եկել, ոչ թե պալատական բանավեճի, այնպես որ ասելիքս պետք է ասեմ ու գնամ, եթե իհարկե թույլ կտաք,
— Իհարկե Արքա,
— Առաքել ես գիտեմ, որ քեզ համար անսպասելի էր մեր հանդիպումը, մանավանդ անակնկալ էր իմ արտաքինը, քանի որ շատերն ինձ պատկերացնում են բարձրահասակ ու հաղթանդամ, սակայն իրականում ինչպես տեսնում ես, ես կարճահասակ եմ: Դու առաջինը չես, որ այդպես զարմանում է, Խորենացին ու Թումանյանը, Նժդեհն ու Իսահակյանը նույն հայացքով են ինձ ընդունել, բոլորը երբ իմանում էին, որ ես Տիգրան երկրորդն եմ: Բոլորի մոտ տպավորվել էր ինչ-որ նկարիչի կողմից արված պատկերը, իրականում ինչպես տեսնում ես, ես շատ տարբեր եմ պատկերից:
— Իսկ Ձեր մետաղադրամների պատկերը, — հարեցրեց Առաքելը, Տիգրանը սկսեց ծիծաղել:
— Այո մետաղադրամները, իմ պատվերով է այդպես արվել, սակայն ինչպես գիտես մետաղադրամի վրա իմ հասակը չի երևում, — նա նորից սկսեց ծիծաղել, — Առաքել գիտես մարդու արած գործն է կարևոր, ո՛չ թե նրա արտաքինը, մարդու հոգին է ամենագլխավորը, եթե հոգին մաքուր է, նրա գործերը բարի են, իմ կառուցած թագավորությունում հենց այդ չափանիշներով էինք շարժվում,

մարդուն գնահատում էինք իր արած գործերով: Իրականում չար մարդը չի կարող օգտակար գործ անել առանց որևէ շահ ունենալու, միևնույն է նա մի օր սայթակելու է և իր հոգում կուտակված սրիկայությունն ու չարությունը դուրս է թափելու, ինչպես ասում են. « գողի, բոզի օրը, քառասուն օր է »: Առաքել ես լավ եմ ճանաչում մարդկանց, լավը մնում է լավ, իսկ վատն էլ վատ... Աստված իզուր չի ասում. « Որ բարի ծառի պտուղը բարի է և քաղցր, իսկ չար ծառի պտուղը դառն է ու լեղի, այնպես որ չար ծառը պետք է կտրվի ու կրակը նետվի, որպեսզի այն պտուղ չտա ու վնասի մյուսներին »:

— Արքա Ձեր կառուցած թագավորության մասին շատ եմ կարդացել, — ընդհատեց Առաքելը,

— Ոչ Առաքել, այն ինչ պետք է ասեմ գրված չիեղել ոչ մի տեղ, այնպես որ ինքդ կարող ես գրել դրա մասին, որովհետև հավատում եմ եմ քեզ, դու մաքուր ու արդար մարդ ես: Իսկ ինչպես ասացի ես արդար ու ազնիվ մարդը միշտ փայլում է հասարակության մեջ, մանավանդ, որ հասարակությունը վարակված է բորոտով: Առաքել մեր մտքերը նույնն են, դու կարծես ես լինեմ, իզուր չէր որ քեզ այցելեց Անդրանիկն ու Կոմիտասը, նրանք գովեստի խոսքերով հիշում էին քեզ, իսկ Ռաֆֆին ուղղակի քո մասին շատ լավ արտահայտվեց: Ճիշտն ասած Սողոմոն Թեհլերյանն էր ուզում գալ քեզ այցելության, սակայն ես շտապեցի, քանի որ իմ ասելիքը շտապ էր:

— Ծնորհակալ եմ Արքա, վստահության համար...

— Առաքել, այդ մենք պետք է շնորհակալ լինենք, որ հիմա մեր գործը դու ես անում, մեր հոգում կուտակված մաղձն ու ճիչը դու ես հասցնում ժողովրդին: Առաքել, ես կարդացել եմ «Ազգադավը» ուղղակի կեցցես, իսկ գիտե՞ս, թե իմ թագավորությունում ինչն էր գերիշխում...

— Ինչը՞ Արքա,

— Օրենքը՛ Առաքել, օրենքը՛: Այն որ ազգադավ տականքներին ցցի էինք հանում իր գերդաստանի առջև: Ազգադավները չպետք է ո՛չ դժոխքում լինեն, ո՛չ էլ քավարանում, նրանց հոգիները պետք

է հարատև թափառեն աշխարհում, որպեսզի լսեն իրենց անիծողների ու նզովվողների ձայները։ Առաքել, իմ թագավորությունում հանցագործը պետք է լիներ զնդանում, իսկ ոճրագործը՝ կախաղանին...
— Արքա, բայց Ձեր ժամանակներն ուրիշ էին...
— Առաքել, ժամանակը ի՞նչ կապ ունի տղաս, դու ասացիր, որ չէիր հավատում, որ ես Տիգրան արքան եմ...
— Այո՛, Արքա, չէի պատկերացնում...
— Ա՛յ տեսնու՞մ ես, բոլորդ պատկերացնում էիք, թե Տիգրան Մեծը հսկա է, ոսկե թագը գլխին, ադամանդներով ու անգին քարերով զարդարված, սակայն ինչպես տեսնում ես այդպես չէ, ես հասարակ մարդու պես եմ՝ հասարակ մահկանացու, ոչ մի ավելորդ շռայլություն, ես ապրել եմ իմ կառուցած պալատներում, բայց իմ ժողովրդի պես հասարակ, նրանց հետ՝ նրանց նման, ժողովուրդը քաղցած է եղել, քաղցած եմ եղել և ես, ժողովուրդը հարուստ է եղել՝ ես նույնպես։ Առաքել, իմ թագավորությունը եղել է հարուստ, որովհետև ժողովուրդն է հարուստ ապրել, ես թույլ չեմ տվել երբեք ազգադավներին կառավարել, ես թույլ չեմ տվել, որ ժողովրդին հարստահարեն իշխաններն ու նախարարները։ Ազգադավներին իրենց գերդաստանի աչքի առջև ցցի ենք հանել։ Առաքել, ես անգամ եկող սերունդների համար թողել էի հուշագրություններ, որպեսզի ժողովուրդը հասկանա, որ ազգադավի տեղը ցիցն է, սակայն հետագայում կղերական քահանաները ոչնչացրեցին իմ թողած հուշագրությունները և փոխարենը մատուցեցին իրենց քարոզները։ Առաքել ես հասարակ կյանքով եմ ապրել, իմ ժողովրդի հետ կիսել եմ նույն տառապանքը, իմ իշխանները հավատարիմ էին, գիտեին, որ մեր գործն արդար է և սուրբ, ժողովուրդը սիրում էր իր երկիրը ու ծաղկեցնում այն։ Իսկ գիտես ձեր պատմաբաններն ու հոգևորականները ներկայացնում էին, որ իմ իշխանավարությունը եղել է հելենական, ապա դա սխալ է, մենք հելեններից ներմուծեցինք մի շարք դրական բաներ, որոնք իրենք ունեին, իսկ դա մեզ հնարավորություն տվեց կրթել մեր ժողովրդին։ Առաքել, անգրագետ ժողովուրդը ունակ չէ պայքարել, ունակ

չէ ազատ մտածել ու գործել, դրա համար մեզ կրթություն էր հարկավոր, կարևոր չէր, թե Հոներից էր թե չինացիներից։ Կարևորը, որ սովորեն ճիշտ ձևով ապրել, որ ճիշտ ձևով կարողանան կերտել իրենց ապագան։ Առաքել Ռաֆֆին ու Աղայանը, մեր մյուս մեծերը միշտ ասել են կրթության ու գիտության կարևորության մասին, ու իմ թագավորությունը հզոր էր իր գիտությամբ և կրթությամբ, անվճար դպրոցներով ու հիվանդանոցներով։ Առաքել, մեր թագավորության մեջ այնպես չէր ինչպես ձեր մոտ, ժողովուրդը հիմա ավելի վատ է ապրում քան մեզ մոտ՝ ձեր թվարկությունից առաջ։ Առաքել մի՞թե աշխարհի լուսավոր գիտնականներին ու մեծերին ունենալով պետք է ապրեք այս խավարում։ Մի՞թե խավարամոլությունը ու ստրկությունը դարձրել է ձեզ այսպես անընդունակ ու անհույս։ Գիտես, անհույս մարդը ոչնչի պետք չէ, վախկոտ մարդը ունակ է երկիրը ծախել, իր ընտանիքը ու հարազատներին մատնել թշնամուն, այդ պատճառով է, որ այս վիճակում եք հայտնվել։ Ստրուկ լինելը վատ բան է, սակայն ավելի վտանգավոր է ստրկամիտ լինելը, քանի որ ստրուկը դեռ կարող է պայքարել իր ազատության համար, իսկ ստրկամիտը անգամ ջանք չի գործադրում ստրկությունից դուրս գալու համար։
Իմ թագավորության մեջ օրենքի առաջ հավասար էին բոլորը՝ զորավարը ու նախարարը, անգամ արքայազն ու թագուհին։ Եթե արքայազն օգտվի իր տիտղոսից ու իր հոր գահից ու թույլ տա շռայլություն, ապա դժվար կլինի արքային համոզել իր ժողովրդին, որ ինքը արդար է ու ազնիվ։ Իմ որդիները ապրել են հասարակ, չեն փորձել անգամ մեր հպատակներին շահագործել։ Արքա լինելու պատիվը այն է, որ պետք է արքայավայել ապրել, պաշտպանել օրենքը ու թույլերին՝ պատժելով չարագործին ու ավազակին։ Եթե ժողովուրդը հարուստ է ապրում, ապա հարուստ ես և դու, եթե ժողովուրդը աղքատ է, իսկ թագավորը հարուստ, կնշանակի որ այդ թագավորը ժողովրդի թշնամին է։ Առաքել, թշնամին թշնամի է, անկախ նրանից, թե նա օտար է կամ էլ ազգակից, նույնիսկ արյունակիցը կարող է թշնամի լինել։ Թշնամին նախանձ է ու չար, իսկ չարին ներել չի կարելի, քանի որ եթե ներեցիր, ապա

կնշանակի, որ թույլատրում ես նրան գործել ավելի մեծ չարագործություն: Այդ պատճառով ինչքան խիստ օրենք լինի թագավորության մեջ, այնքան ժողովուրդը ավելի ազատ կլինի, ժողովուրդը վստահ ու խաղաղ կլինի, որովհետև գիտի, որ իրեն պաշտպանելու է օրենքն ու թագավորը: Թագավորը եթե ստիպում է ժողովրդին հարկ տալ, ապա նա թշնամի է, իսկական թագավորը պետք է այնպես անի, որպեսզի ժողովուրդը հարուստ ապրի, որպեսզի իր հարստությունից էլ բաժին տա արքային, ոչ թե մահակով ու արյունով իշխանավորի ժողովրդի վրա: Առաքել բռնակալ թագավորներ շատ եմ տեսել, ու գիտես միշտ հաղթել եմ նրանց և առանց մի նետ արձակելու... Իսկ գիտե՞ս, թե ինչու...

— Ինչու՞ Արքա...

— Որովհետև այդ բռնակալ թագավորների հպատակները իրենք էին կամովին բացում իրենց բերդերի ու ամրոցների դարպասները, իրենք էին կամովին գալիս ու միանում իմ բանակին, որովհետև գիտերին, որ իմ թագավորությունում գերիշխում է օրենքն ու արդարությունը: Նրանք գիտեին, որ պաշտպանված են լինելու իմ և իմ ժողովրդի կողմից: Իմ բանակը երբեք արյունով ու կրակով չեն նվաճել, ընդհակառակը ամենուր մեզ դիմավորում էին ծաղիկներով և աղ ու հացով:

— Արքա դրա համար էլ ծովից-ծով երկիր նվաճեցիք...

— Առաքել, բայց հիմա այս ի՞նչ դարձրեցիք իմ Ծովից - Ծով երկիրը, հիմա մի հողակույտ է մնացել, այն էլ սաշիկների ու Մկների ձեռքին, մի՞թե իմ կառուցած ու կերտած երկիրը այսպիսին էր, մի՞թե իմ կրթած ու դաստիարակած ժողովրդից մնացել է այս որբերի կույտը, որը լացում է ու օգնություն աղերսում օտարներից: Օտարների լծի տակ մտնում, հզորների հովանավորությունը փնտրում: Այնպես արեցիք, որ անգամ ամաչում եմ ասել, որ ես հայ եմ եղել, որ այն էլ ծովից-ծով Հայաստանի կերտողը: Լավ, գոնե մի քիչ ամոթ ունեցեք ու մի հիշեք ինձ էլ, իմ ժամանակներն էլ, ծովից-ծով Հայաստանն էլ... Թե չէ ինչքան անպետք արարած կա ելնում է ու Ծովից-Ծով Հայաստանից է խոսում, մեկը հարցնելու լինի. Ա՛յ Մոզի, դու՛ քո կյանքում որևէ լավ բան արած կա՞ս քո

ժողովրդի համար, որ հիմա քո պիղծ շուրթերով Տիգրան Մեծի ան ունն ես տալիս: Նժդեհը իզուր չէր ասում. « Ապերախտ ժողովուրդ »: Լա՜վ, այս ժողովրդի մեջ մի Նաիրի Հունանյան կամ Թեոլերյան չկա՞, որ ելնի ու էդ պիղծ տականքի բերանը փակի, որ իմ անունը չտա:

— Արքա, ազնիվ տղաներ շատ ունենք, նույնիսկ կին ազատամարտիկ՝ Սուսաննա Մարգարյան, որը ազնիվ պայքարի է դուրս եկել...

— Գիտեմ Առաքել, լսել եմ Սուսաննա Մարգարյանի մասին, իսկ ինչու՞ ժողովուրդը նրան չի ընդունում, կնշանակի ժողովուրդը ապերախտ է...

— Չգիտեմ Արքա...

— Առաքել եթե ժողովուրդը չգիտի գնահատել իր լավն ու վատը, ապա այդ ժողովուրդը արժանի է տառապելու և Սուսաննան ափսոս է, որ կոկորդ է պատռում այդ ժողովրդի համար:

— Արքա, բայց ժողովուրդը վախենում է, դրա համար չեն փորձում ինչ-որ բան անել:

— Վախենու՞մ է, — քմծիծաղեց արքան, — ինչպես թե վախենու՞մ է, վախենում է լավ ապրելու՞ց, վախենում է ազատությունի՞ց ու ճշմարտությունի՞ց... Տղաս դրանք հիմար խոսքեր են, ժողովուրդը չի վախենում ծեծվելուց ու նվաստանալուց, չի վախենում խոշտանգվելուց ու մեռնելուց, սակայն վախենում է մարդավայել,արժանապատիվ ապրելու՞ց, վախենում է պայքարել իր գոյի համար: Իսկ գիտե՞ս, որ երկու վախը մեկ մահ է...

— Գիտեմ Արքա...

— Առաքել, եթե իրենց որդիների ազատությունը իրենց համար կարևոր չէ, թող այդպես ողջ կյանքները վախենալով հանդուրժեն բռնակալին, եթե իրենց պատիվը կարևոր չէ, թող վախով բռնաբարվեն ու լռությամբ տանեն չարի իշխանությունը: Վախկոտ ժողովրդին աստվածները չեն կարող փրկել, ուր մնաց առաջնորդները: Կյանքը մեկ անգամ է տրվում մարդուն, և այն պետք է ապրել արժանավայել, որպեսզի զգաս նրա բերկրանքը, եթե աշխարհ ես եկել տառապելու ու տառապեցնելու համար, ավելի լավ է սատկ-

ես… Առաքել, սատկել եմ ասում, որովհետև վախկոտն ու ազգադավը չեն մեռնում, նրանք սատկում են, մեռնում է հարգարժան ու ազնիվ մարդը, նահատակվում է ազատասերն ու հերոսը։
— Գիտեմ Արքա, ես դրա մասին անգամ գրել եմ, ինձ շատերը քննադատում ու մեղադրում, որ մեռելների ետևից խոսելը մեղք է, բոլորը թութակի պես կրկնում են. «Մեռածի ետևից կա՛մ ոչինչ չեն ասում, կա՛մ ասում են լավը»։
— Առաքել, ճիշտ ես տղաս, այդպես էլ կա… Մեռել էլ կա, մեռե՛լ էլ։ Մեռնելուց առաջ պիտի մտածեին, որ բարի գործեն, որ ետևից խոսալու առիթ չլինի։
— Ես հենց դա եմ ասում Արքա։
— Առաքել հայ կղերական հոգևորականները հորինեցին այդ ամենը, նրանք էին ժողովրդի մեջ տարածել. « Մեռածի ետևից՝ կա՛մ լավը, կամ ո՛չ մի բան »։ Նրանք այս ամենով արդարացնում էին իրենց հանցանքները, որովհետև իրենք աստվածապիղծների հետ էին հանցակից դարձել, ոսկին ու արծաթը կուրացրել էր նրանց, ազգադավ ուրացողներին հերոսացնում էին ու աստվածացնում, ինչպես անում են հիմա։ Գիտե՞ս Հուդան Հիսուսին երեսուն արծաթով մատնեց, իսկ այս հոգևորաան կոչված տականքները պատրաստ են գրոշներով ծախվել։ Ասա արդյո՞ք դրանք կարող են Աստծուց ու մաքրությունից խոսել… Առաքել, հոգևորականները ազգի հոգևոր գաղափարը կրողը պետք է լինեն, ոչ թե ազգի ոգին կոտրողը։ Իմ թագավորության մեջ քրմապետներն ու քրմերը զորքի առջևից էին գնում, դրա համար ժողովուրդը սիրում էր իր հավատքն ու թագավորին, սիրում էր իր երկիրն ու ազատությունը, դրա համար էր մեր կայսրությունը ծ ովից-ծով ձգվել, որովհետև ոգի ու սեր կար, ոչ թե արյուն ու կրակ։ Առաքել, կղերական քահանաները քրիստոնեությունը բերեցին լացի ու վախի հետ միասին, նրանք հալածեցին ազատությունը քարոզող մեր քրմերին, ոչնչացրեցին անգամ ազատության ոգին։ Փոխարենը լուսավորեին Լուսավորիչի կանթեղով, նրանք խավարեցրին լույսի ճանապարհը, փոխարենը կրթելու ժողովրդին, նրանք տգիտություն ու սնահավատություն սովորեցրին նրանց, իրենց պես տգետ ու շա-

համոլ։ Նրանք սնահավատությունը ներմուծեցին, որպեսզի ոչնչացնեն հայ մարդու ազատատենչ ոգին։ Առաքել, հայը ազատասեր է ու պայքարող, սակայն սպանեցին այդ ոգին, չնայած գիտեմ, որ մեր ազաատատենչ իշխանների արյունը դեռ կա ու ապրում է, իսկ գիտե՞ս, թե որն է այն…
— Արքա, ազատամարտիկների՞ն նկատի ունեք…
— Այո Առաքել, հենց նրանց երակներում է մեր արքայական ու իշխանական արյունը, դրա համար պատերազմում հաղթեցինք։ Առաքել, մեր ժողովուրդը այսպես չէր, ես ամաչում եմ, որ եղել եմ այս ժողովրդի երբեմնի թագավորը։
— Արքա, մենակ Դուք չեք, զորավար Անդրանիկն ու Կոմիտասը, Ռաֆֆին նույն բանը ասացին, մի՞թե մեր Մեծերը երես են թեքելու մեր ժողովրդից։ Արքա Դուք ժամանակին կարողացաք հզորացնել մեր երկիրը, ասացեք արդյոք ո՞րն է ելքը, ինչպե՞ս կարող ենք անցնել այս փորձության միջով։ Մի՞թե նորից հեղեղվելու է ազգիս արյունը…
— Առաքել, առանց արյան ինչպե՞ս եք ուզում մաքրեք չարին… Այդպես չի լինում որդիս…
— Արքա, սակայն հիմա ժամանակները այլ են, չենք կարող կախաղանների սյուներ դնել, կամ ցցին հանել ազգադավներին։ Աշխարհը և մարդկությունը ճիշտ չի հասկանա, չի հանդուրժի այդ ինքնադատաստանը։
— Առաքել, ի՞նչ ինքնադատաստան, տղաս հասկանում եմ քո ասածը, ինչպես տեսնում եմ դու գիտես այդ հարցերի պատասխանը, սակայն տալիս ես…
— Արքա շատ կուզենաի լսել Ձեր կարծիքը։
— Առաքել ես դեռ սկզբում ասացի, որ դու մտածում ես ինձ պես, այնպես որ կվարվեմ այնպես, ինչպես դու ես մտածում… Մի՞թե դահիճն օրենքից բարձր է, իսկ կախողը կախվողից։ Առաքել, ազգադավներին միայն մեկ պատիժ պիտի լինի՝ դաժան ու տառապալից մահ՝ արժանի ու համաչժեք։ Գիտես ազգադավությունը ամենավտագավոր բանն է, և անհրաժեշտ է խիստ միջոցներ ձեռք առնել դրա դեմը առնելու համար։ Այդ էր պատճառը, որ իմ թագ-

ավորությունում ազգադավին ցցի էինք հանում ու դարձնում շաքարաքլոր,
— Շաքարաքլո՞ր, — զարմացավ Առաքելը, — Արքա իսկ Մեր թրվարկությունից առաջ, կներեք, այսինքն Ձեր ժամանակներում էլ եղե՞լ շաքարաքլորը…
Արքան սկսեց ծիծաղել:
— Առաքել իհարկե եղել է… Հերթական ազգադավին ցցի բարձրացնելիս տոնակատարությամբ էինք տոնում այդ արարողությունը, փոքրիկները շաքարաքլորով, թխվածքաբլիթներով ու մեղրամոմով էին տոնում ազգադավի մահապապատիժը: Ժողովուրդը ծաղիկների ու երգի ուղեկցությամբ էր դավաճանին հանում՝ «Անարգանքի սյունին» որովհետև նա արժանի էր, որպեսզի արհամարվի բոլորի կողմից: *(Ըստ պատմական աղբյուրների « Անարգանքի սյունը » հենց այդ Ցիցն էր, որին նկատի ուներ Տիգրան Մեծը, և հենց իր ժամանակներից այդ բառերի գործածությունը մնաց ժողովրդական բանահուսության մեջ, որպես ամենադաժ ան ու սարսափելի մահապատիժներից մեկ: Սակայն քրիստոնեության ժամանակահատվածում կղերական քահանաների կողմից « Անարգանքի Սյուն » բառակապակցությունը դարձվեց որպես փոխաբերական անիմաստ մի բան: Ըստ Հեղինակի՝ Գեհենի Առաքել)* Ժողովուրդը գիտեր, որ ազգադավի կյանքը գրոշ չարժե, նույնիսկ աղբն էր արժեքավոր, բայց ոչ նրա կյանքը: Ազգադավի գերդաստանը տեսնում էր իր հարազատի մահապատիժը և ցավ ապրում, ցավ էր ապրում, որ նրա մահը տոնակատարությամբ է ուղեկցվում: Առաքել, եթե Ազգադավը իր կենդանության ժամանակ չի մտածում իր կյանքի համար, ապա մեզ մընում է միայն զվարճանալ նրա մահով: Իսկ շաքարաքլորը բաժանվում էր հանդիսատեսներին, որոնք մասնակցում էին մահապատժի արարողությանը: Նրա մահը տոն էր ժողովրդի համար, և հիմա էլ այդպես պետք է լինի… Առաքել, Ազգադավը անարգանքի սյունին պետք է գամված լինի, ոչ թե հերոսների պանթեոնում կամ նախագահի նստավայրում: Առաքել, մենք Ազգադավին նըստացնում էինք մեղրամոմով համեմված ցցի վրա ու սեփական մարմնի ծանրությունը իջեցնում էր ներքև ու կամաց-կամաց

կտրատելով ներքին օրգանները ընկղմվում էր նրա մեջ, հասնելով մինչև սրտին:
— Ինչ դաժան է Արքա,
— Առաքել իսկ դաժան չէ՞ սեփական ժողովրդին ուրանալը, ուրանալ այն հողին ու ջրին, որը ծնել էր իրեն: Ուրանալ իր ուսուցիչներին, ուրանալ շրջապատի մարդկանց, որոնք օգնել են իրեն: Առաքել, մի՞թե նա պետք է այդպես հանգիստ մարսեր իր արածը: Նա պարտավոր էր գիտակցել, որ դավաճանությունը ուշ թե շուտ պատժվելու է, թող նախօրոք մտածեր, որ գալու է ցցին բարձրանալու ժամանակը: Տղաս, դրանց խղճալ պետք չէ, նրանք մեր թշնամիներն են, նույնիսկ թշնամուց ավելի վտանգավոր են, իսկ դավաճանները մեր կողքին իրավունք չունեն ապրելու, իրավունք չունեն գտնվել մեր ժողովրդի մեջ, անգամ թշնամու բանակում: Առաքել, թշնամիները միշտ օգտվում են ազգադավների ծառայությունից, սակայն երբեք նրանց չեն վստահում, հասկանալով, որ եթե նա ուրանում է իր ժողովրդին, ապա կուրանա և կդավաճանի իրենց, այդ պատճառով իրենք նույնպես հաճույքով են պատժում դավաճանին: Մեկ անգամ ուրացողը, կուրանա երկրորդ անգամ: Իզուր չէ Աստված պատվիրել, որ երկու տիրոջ ծառայելը մեղք է, այնպես որ ամեն ինչ տիեզերական օրենքի համաձայն է: Այդ պատճառով Ազգադավի տաժանակիր մահը միայն կարող էր սփոփել ժողովրդին, և դաս լիներ մյուսների համար: Առաքել իսկ դուք ի՞նչ արեցիք, դուք ձեր ձեռքով ձեր տունն ու երկիրը ավիրեցիք... Շենացրած երկիրը դարձրեցիք ավերակ, հենց այդ ձեր սխալը դարձավ ձեզ համար ճակատագրական... Ո՞վ էր տեսել խելագար շիզոֆրենիկը սպարապետ դառնա, իսկ փնթի խոզերն էլ գեներալ ու մարզպետ... Ձեր երկիրը հենց դուք կործանեցիք, գիտակցելով, որ նրանք ցցի են արժանի, սակայն արեցիք հակառակը՝ նրանք բազմեցին իշխանության օթյակում: Առաքել, ու այդ ձեր ախալներից օգտվեց թշնամին ու սկսեց կողոպտել երկրի ընդերքն ու հարստությունը, սկսեց վաճառել երկաթգիծն ու ճանապարհները, գազամուղն ու էլեկտրոցանցերը, վաճառեցին անգամ ջուրն ու ժողովրդին...

Բարբարոսաբար ծախեցին ինչ կար և ինչ ունեինք՝ ընդերքն ու օդը, ճարտարապետական ու պատմական կոթողներն ու հուշարձանները, ուսումնական հաստատություններն ու գրադարանները, մշակույթի օջախները, բարոյականությունն ու թասիբը, անգամ պատիվը... Իսկ հիմա ինքներդ ձեզ խաբում եք, թե անկախ երկիր ենք, ու բանակ ունենք... Ու՞մն է պետք այն պետությունը, որը միայն ձևական է պետություն, ու՞մն է պետք այն բանակը, որը դարձել է երիտասարդ զինվորների սպանդանոց...
Առաքել, ձեր երկիրը անգամ օտար երկրների համար դարձել է ոտքի խոզանակ, ով ուզում է ոտքերը սրբել, օգտագործում է ձեզ՝ Ռուսաստանը, Ամերիկան ու Եվրոպան, անգամ Աֆրիկան: Աֆրիկյան վայրենի ցեղերը իրենց անկախությունը նվաճեցին, իսկ դուք Թոխմախի առնանդամի ասելով գնացիք ու մտաք ռուսի լծի տակ: Այս լուսավոր դարում ուրիշի լծի տակ, պատկերացնել չեմ կարողանում:
— Արքա իսկ ինչու՞ եք միշտ ասում. « Ձեր երկիրը », չէ՞ որ սա Ձեր երկիրն էլ է:
Արքան ծիծաղեց:
— Ինչպե՞ս թե իմ երկիրն է, տղաս. կարո՞ղ ես արդյոք ասել, թե ի՞նչն է իմը: Արդյո՞ք ես ձեզ թողել եմ այս ոտնաչափ երկիրը, ե՞ս եմ ձեզ թողել այդ տգետ ու փնթի գեներալներին, ազգադավ պատգամավորներին, սատանային ծառայող հոգևորականներին, ուրիշի լծի տակ ձգտող ժողովրդին... Ո՞րն եմ ես թողել, կարո՞ղ ես ցույց տալ գեթ մի բան, որը ինձանից է մնացել... Տղաս, իմ թագավորության ամեն մի շինական ու մշակ, զորավար ու զինվոր, իշխան ու քրմապետ մտածում էին երկիրը շենացնելու ու ծաղկեցնելու, հզորացնելու մասին, իսկ ի՞նչ եք ուզում ասել, թե դա նույն ժողովրդի սերու՞նդն է, որը սիրում է ծեծվել ու լացել, սիրում է սրա նրա լուծը, սիրում է բամբասել, ազգադավին ու թշնամուն հերոսացնել... Արդյո՞ք այս ամենը և ես կապ ունեմ ձեր երկրի ու ժողովրդի հետ:
— Ճշմարիտ է Արքա, ես ոչ մի կապ չեմ տեսնում...
— Եթե չես տեսնում, կնշանակի, որ մենք օտար ենք, այս ժողով-

ուրդը արժանի չէ, որ հիշեն Տիգրան Մեծին էլ, Նժդեհին էլ, Անդրանիկին, Կոմիտասին, Ռաֆֆուն ու անգամ Թեհլերյանին...
Առաքել, արժանի լինելու համար պետք է դրան արժանանալ, նախ հարկավոր է ազատ մտածել, գործել ու աշխատել, ոչ թե Ժիրայր Սեֆիյանի պես գնալ ծեծվել ու պայքարը շարունակել: Չեմ հասկանում այդ ծեծվելով պայքարս ո՞րն է, հո դուք մազոխիստ չե՞ք... Շանթ Հարությունյանն ու Ժիրայր Սեֆիյանը իրար հետ վիճում են, թե հեղափոխության ու ծեծվելու մենաշնորհն ումն է... Բա ամո՞թ չի... Ի՞նչ է, հաճու՞յք է պատճառում ծեծ ուտելը...
— Արքա, ես մի ազնիվ հայորդի գիտեմ, նա տարբերվում է բոլորից՝ Սարգիս Հացպանյանը...
— Առաքել, մի Սարգիս Հացպանյանը ի՞նչ պիտի անի այդ հսկա ոհմակի դեմ, քանի՞ տականք կա, քանի՞ ազգադավ...
— Արքա, այդպես մի ասեք, ժողովրդի մեջ դեռ պահպանվել է Ձեր իշխանների ու զորավարների արյունը, ու վստահ եմ այն բոցկլտալու է...
— Առաքել, որդիս, ի՞նչ լավատեսն ես, իսկապես Ռաֆֆին ճիշտ էր ասում, որ ճակատդ պետք է համբուրել: Շնորհակալ եմ, որ դեռ կարողանում ես հավատալ, հենց քեզ պես լուսավոր գաղափարներով մարդիկ են, որ լուսավորում են ազգին: Ապրես որդիս, եթե այդպես ես կարծում ու վստահ ես, ապա մեզ մնում է համբերությամբ սպասել քո կանխատեսումները տեսնելու համար:
— Արքա, սկսելու ենք հենց գլխավոր Ազգադավից:
— Կեցցե՜ս, դա ուրիշ բան է: Առաքել, ես գիտեմ, որ հիմա չեք կարող ազգադավներին ցցի բարձրացնել, սակայն կան այլ միջոցներ պատժելու նրան և իր գերդաստանը, և ինչպես հասկանում եմ դու գիտես նրանց պատժելու ձևը...
— Այո Արքա, գիտեմ:
— Առաքել, ազգադավներն ու ճիվաղ դավաճանները շատ վտանգավոր են ու նրանց խղճալ ու ներել չի կարելի: Պետք է հասկանաք, որ ազգադավը չի կարող հօգուտ ժողովրդի գործել, չի կարող, քանի որ իր արյունը արդեն պղծվել է, իսկ մաքրազերծվելու համար պետք է սեփական արյունով լվանալ: Առաքել, դրանց պետք է

արմատախիլ անել, եթե ոչ ապա ինքդ տեսար, թե ինչպես աճեցին ու բազմացան տականքները: Առաքել դրանք առնետների պես են բազմանում՝ ժամերով ու վայրկյաններով: Նրանք չարորակ ուռուցքի պես են արմատավորվում ազգի հյուսվածքներում, հետո էլ սկսում են ներսից այն ոչնչացնել, սկզբում ոչնչացնում են արվեստն ու մշակույթը, հետո ազնվությունն ու բարոյականությունը, իսկ վերջում էլ ֆիզիկապես են ոչնչացնում: ՈՒ այդպես ազգին դարձնում են հոտ, հո՛տ նկատի ունեմ ոչխարների հոտը:
Առաքել, դժվար է չարի դեմ պայքարել բարությամբ ու մեծահոգություն ցուցաբերելով, նրանց պետք է կացնահարել…
Ժողովուրդը այնքան է օտարացել իրար, որ եղբայրն՝ եղբորն է կացնահարում, հետո էլ ասում են, թե Սաֆարովն ոճրագործ է, սակայն մոռանում են, որ իրենց մեջ, իրենց կողքին հազարավոր սաֆարովներ կան՝ սկսած Վլադիմիր Գասպարյանից, վերջացրած Գորիկ Հակոբյանով, մնացած երեսփոխանների մասին էլ չեմ ասում: Առաքել, Սաֆարովը մեր արյունից չէր, սակայն մեր արյունից էր այն ոճրագործը, որը սպանեց, հետո պտտաձողի վրա կախեց կուրսանտ՝ Հայկազ Բարսեղյանին: Մեր արյունից էր ռազմական բժիշկ Վահե Ավետյանին սպանողը, Ազատամարտիկ Հրաչ Մուրադյանին սպանողը. ոճրագործ « Ջունգլ » կոչվող հրեշը, որը ծեծելով սպանեց ազատամարտիկ Վարդան Թումասյանին:
Ոճրագործ են ազատամարտիկներին թիկունքից խփողները, զինվորներին խոշտանգած ու սպանած գեներալներն ու սպաները:
Տեսնու՞մ ես, թե ինչքան թշնամի կա մեր մեջ, հենց նրանցից պետք է մաքրվեք… Քանի որ ներքին թշնամին միշտ թիկունքից է խփում, ինչպես եղավ ազատամարտիկների տարբերակում:
— Արքա, ես դրա մասին իրազեկել եմ ժողովրդին:
— Գիտեմ որդիս, տեղյակ եմ, սակայն մի հարցում ես սխալվում, դու ոչ թե ժողովրդին ես իրազեկել, այլ ընթերցասեր հասարակությանը: Առաքել, ժողովուրդը ու հասարակությունը տարբեր բաներ են… Հասարկությունը կազմակերպված է ու խելացի, ունի հասարակական կարծիք, գիտի իր լավն ու վատը, իսկ ժողովուրդը: Առաքել, նոր ասացի, որ ժողովուրդը դարձել է հոտ,

թույլ է տալիս, որպեսզի իրեն ոչխարի պես քշեն ուր պետք է, անգամ սպանդանոց… Այդ հոտը թույլ է տալիս, որպեսզի իրեն օգտագործեն՝ ծեծեն ու նվաստացնեն… Առաքել, դրան ժողովուրդ չի կարելի կոչել, ժողովուրդները ունենում են պատմություն ու մշակույթ, ունենում են ճարտարապետական ու պատմական հուշարձաններ, ունենում են գիր ու գրականություն… Ժողովուրդը ունենում է նահատակված հերոսներ… Իսկ դուք ի՞նչ արեցիք, « Որոգայթ» հեռուստասերյալով եք սերունդ դաստիարակում՝ ոչնչացնելով գիրն ու գրականությունը, խոսքն ու բառը, երգն ու երաժշտությունը: Ռաբիզ ու փնթի սերունդ կրթելը դարձել է չափանիշ ու փնթիները ոչնչացրեցին ճարտարապետական ու պատմական կոթողները, ոչնչացրեցիք պատմությունը, անարգեցիք ազգային հերոսի շիրիմը, իսկ Եռաբլուրի նահատակված հերոսների շիրիմների մասին չեմ խոսում… Առաքել, իսկ քո ասած այդ ժողովուրդը լռեց՝ այս բոլորը տեսնելով, շարունակում է հանդիսատեսի անտարբերությամբ ու սառնասրտությամբ դիտել ապագա սերնդի ոչընչացումը: Ժողովուրդը չի կարող այդպես անտարբեր ու սառնասիրտ լինել, ժողովուրդը ունենում է հոգի ու ոգի, սակայն ես տեսնում եմ միայն վախկոտ ու մուրացկան մի ամբոխ, որին անգամ արևի լույսից պետք է զրկել:

— Արքա գիտեմ, դրա համար էլ փորձում եմ իմ ուժերի չափով լուսավորել ժողովրդին:

— Որդիս. լուսավորել պետք է, և պարտավոր է անի յուրաքանչյուրը, սակայն երբ ազգի մտավորականությունը և հոգևորականությունը հրաժարվում են կատարել իրենց պարտքը, ապա նրանք կրկնակի հանցագործ են, դրանց պետք է ոչնչացնել, բառիս բուն իմաստով… Առաքել, այն մտավորականը, որը տեսնելով իր ժողովրդի տառապանքը, սակայն գրում է սիրո և ծաղիկների մասին, դա իսկական մեղսագործ է: Ու՞մն է պետք նրաց սերն ու ծաղիկները, երբ շրջապատում աղքատություն է ու սով: Իսկական գրողը ու երգիչը, արվեստագետն ու հոգևորականը պարտավոր են ստեղծել ժողովրդի համար, ոչ թե մի խումբ հանցագործների, հանցագործին մեծարողը ինքն է հանցագործ: Իմ թագավորությ-

ան մեջ, հենց ամենաբարձր տեղում կախում էինք մտավորականներին, որոնք հետույքալիզությամբ էին զբաղվում, ինչպես ասում են. « լիզեցին էլ՝ ստացան էլ »: Առաքել, իմ թագավորությունում շողոքորթ, բանսարկու, խաբեբա մարդկանց պատժում էինք Խարանելով նրանց ծոծրակին իրենց կնիքը, որպեսզի հասարակությունը իմանա, թե ովքեր են նրանք... Իմ թագավորության մեջ օրենքից բացի գերիշխում էր սերը... Սերը Առաքել, շատ կարևոր է, քանի որ սիրո պտուղից է ծնվում բնությունն ու աշխարհը: Աստված իզուր չասաց. « Սիրեցեք Զ միմյանց » որովհետև սիրող մարդը ընդունակ չէ չարություն գործել... Առաքել, Սեր, ներդաշնակություն, ահա իմ երկրի հզորացման գաղտնիքը: Եթե երկրի իշխանը խաբեբա է և չար, ապա նրա հպատակները իր պես հանցագործ են, իսկ եթե երկրի իշխանը բարեպաշտ է ու ազնիվ, նրա երկիրը շենանում է ու բարգավաճում, իսկ ժողովուրդը ազնիվ են ու կրթված: Առաքել, իմ թագավորությունում դպրոցներն ու թատրոններն անվճար էին, անվճար էին գրադարաններն ու դպրությունը: Մեր քրմերն ու ուսուցիչները սովորեցնում էին սերունդներին լինել ազնիվ, արդար ու անվախ: Մեր ճարտարապետները կառուցում էին անառիկ բերդեր ու ամրոցներ, կամուրջներ ու ճանապարհներ, ոչ թե ձեզ պես եկեղեցիներ ու վանքեր, դղյակներ ու կազինոներ... Առաքել, իմ թագավորությունում բժշկությունը անվճար էր, ոչ թե ձեր պես կաշառակեր մեղսագործ բժիշկներով, որոնք դահիճներից ոչնչով չեն տարբերվում: Եթե պետության իշխանը ժողովրդին օգտագործում է, ապա այդ ժողովուրդը արժանի է իր իշխանին, քանի ժողովուրդը հանդուրժում է, որպեսզի իրեն խոշտանգեն ու նվաստացնեն:

— Արքա ես գիտեմ, որ Դուք առաջին հերթին սահմանների մասին էիք մտածում...

— Ճիշտ ես նկատել Առաքել, պետությունը սկսում է սահմանից, ավելի ճիշտ սահմանապահից: Տղաս, սահմանը միայն սահմանագիծը չէ, սահմանը պետք է ամուր լինի բնակչությամբ, իմ թագավորության մեջ սահմանային տարածքներում անվճար էր անգամ սննդամթերքը, սահմանային շրջանները թագավորական գանձա-

ռանին հարկ չէին տալիս և ժողովուրդը ձգտում էր այնտեղ կառուցել իր տունը ու ամրանալ, ստեղծել հարստություն ու ապրել խաղաղ: Նա երբեք թույլ չէր տա, որ թշնամին իր ունեցածը ու ստեղծածը թալանի, գիտեր, որ արքայական զորագունդը իր կողքին է ամեն վայրկյան, որ հարկն եղած դեպքում նրանք զենքը ձեռքին միանում էին իմ զորագնդերին ու կռվում հերոսաբար, գիտեին, որ իրենց թիկունքում իրենց օջախն է: Այնպես որ սահմանը ժողովրդով է սահման, ոչ թե սահմանանշանով: Առաքել, իսկ հիմա ի՞նչ եմ տեսնում, դա ողբալի է, ու գիտե՞ս, թե ինչ ցավ եմ ապրում, առանց այն էլ իմ Ծովից-Ծով երկիրը դարձրեցիք մի բուռ, իսկ այդ մի բուռ հողն էլ չեք կարողանում պաշտպանել:
Ի՞նչ օրի են սահմանամերձ բնակավայրերը, ավերակ ու թալանված, ժողովրդաթափ, հարկերով արյունաքամ են արել գյուղացիներին, ու դա թուրքը չէ, այլ թուրքի վիժվածքներն են, որոնք կառավարում են ձեզ: Հենց այդ թուրքածին իշխանիկների ու գեներալիկների պատճառով է, որ զինվորները իրար են սպանում, իրար են հոշոտում, որովհետև երկիրը տեր չունի, տերը կա, սակայն նա իր որովայնի մասին է մտածում: Առաքել, մինչդեռ ժողովուրդը նրա որովայնը պատռեր, իսկ ամորձներն էլ կախ տար սահմանագծի փշալարերից, փոխարենը լացում են ու օգնություն աղերսում:
— Ճիշտ է Արքա, վատը այն է, որ սպասում է օտարի օգնությանը:
— Առաքել, եթե ժողովուրդը ինքը իրեն չի կարողանում օգնել, ապա այդ դեպքում ո՞վ կցանկանա այդ վիճակում հայտնվածին ձեռք մեկնել: Առաքել, ձեռք մեկնում են բարեկամին, բաց ո՛չ ապերախտ անշնորհակալին... Մի ազատամարտիկ չկարողացան պահել, էլ ուր մնաց պետություն... Ափսո՜ս այն արյունը, որ մենք թափեցինք այս սերունդի համար: Առաքել, շատ են ասում Տիգրան Մեծ, Ծովից-Ծով Հայաստան, գիտե՞ս ինչքան եմ զզվել այդ շաբլոն դարձած խոսքերից, անգամ Նժդեհը նույնն էր ասում, որ ժողովուրդը գրում է իր խոսքերը ու դրանով սահմանափակվում: Առաքել, խոսքերը եթե գործի չեն վերածվում, ապա այն կորցնում է իր արժեքը, ու՞մն են պետք օդի մեջ կրակած բառերը, դրանք

միայն նվաստացնում են ասող հեղինակին: Դրա համար Նժդեհն ամեն անգամ ողբում է, երբ իր արտահայտած մտքերը ու խորհուրդները շաղ եք տալիս ամենուր՝ աննպատակ: Ինչքան ցածրահոգի պիտի լինի ազգը, որ անարգի իր հերոսին: Չգիտեմ ինչպես արտահայտեմ մեր վիշտը, քիչ է մնում մեռելներով ելնենք շիրիմներից ու թքենք այս ժողովրդի երեսին: Ախր Սաշիկն ու Սերժիկը ո՞վ են, որ վախենում եք նրանցից... Մի՞թե չեք հասկանում, որ նրանք արժանի չեն ձեզ իշխելու... Եթե ուժից ու հնարավորությունից զրկվել եք, դա ուրիշ բան... Սակայն ձեր մեջ՝ ձեր կողքին եղած առաջնորդին էլ եք քարկոծում, ասա մի՞թե սա ազգի պահվածք է, արդյո՞ք ազգը կարող է այդպես անշնորհակալ լինել: Առաքել, չի կարելի միայն անցյալով ապրել, հարկավոր է անցյալը նայելով առաջ գնալ, հարկավոր է անցյալի դասերից օգուտ քաղել, մինչդեռ ինչպես տեսնում եմ ոչինչ չսովորեցիք, իզուր չէր Նժդեհը ասել.« Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում »: Առաքել, իսկ Թումանյանը ասում էր.« Ընդունակ չեղանք անցյալից դասեր քաղել »: Առաքել, իսկ ո՞վ էր խանգարում ձեզ սովորել ֆրանսիացիներից, ո՞վ էր խանգարում, որ սովորեինք գերմանացիներից, անգամ պորտուգալացիներից ու իսպանցիներից... Առաքել, փչացաք ազգովի, ու միայն դատարկությամբ ու պորտաբուծությամբ եք զբաղվում, մինչդեռ պետք է առողջ երիտասարդություն ունենաիք, ոչ թե հիվանդոտ ու վախկոտ, շեֆին քծնող, տիրոջը հնազանդ: Առաքել, կանայք հիմա ավելի ուժեղ են, քան տղամարդիկ, հետո էլ միասեռականներին են մեղադրում...

— Այդպես է Արքա, ազատամարտիկ Սուսաննա Մարգարյանը վկա:

— Առաքել մեր ժողովուրդը կնոջը մեծարել գիտի, կինը օջախի, տան, անգամ պետության հենասյունն է, իզուր չէր իմ խնջույքի սեղանները զարդարում էին ազնվազարմ տիկնայք: Կանայք իմ թագավորության մեջ մեծ տեղ են զբաղեցրել, տարբերություն չի եղել կին և տղամարդ, բոլորն էլ եղել են հավասար, տղամարդիկ պատերազմում, էին, իսկ կանայք թիկունքում: Առաքել, եթե բան-

ակը թիկունք չունի, ապա այդ բանակը ոչնչի պետք չէ։ Իսկ հիմա, ի՞նչ եմ տեսնում, ինչպես կերտեցիք ձեր բանակը։ Արցախում կռվում էին, իսկ թիկունքում՝ թալանում, հիմա սահմանին կանգնած զինվորը զոհվում է, իսկ նախարարները դղյակներ ու ապարանքներ են կառուցում, դրանով դանակահարելով զինվորի ու բանակի թիկունքին։ Թիկունքը թալանում են ու վայելում։
Գեներալներդ ճարպակալել են, գորտի նման աչքերը դուրս թռել իրենց խոռոչներից, որովհետև թիկունքի եղածն են լափել... Չեմ հասկանում, լափելն էլ ձև ու չափ ունի, բայց ա՞յդ ձև... Անկուշտ են, լափու՜մ են, լափու՜մ... Լափում են զինվորի հացը, լափում են զինվորի ծնողի քրտինքը, լափում են ժողովրդի արյունն ու դրանից հետո էլ հայտարարում, թե. « Ով փորձի ինձնից պատասխան պահանջի, թուրքից էլ փիսն ա, սապլյակ թուրք ա։ Եթե էս հանրապետության մեջ մեկը կա, որ ինձնից պատասխան պահանջի, ուրեմն՝ թուրքից էլ փիսն ա »։ Թուրքն է փիսը՞, ա՛յ Կոռազի շոֆեռ... Դու ո՞վ ես, որ ժողովրդին որակավորում ես, « սեՌունդ » ես կրթու՞մ, կյանքումդ մի գիրք բացած չկաս սերու՞նդ ես ուզում դաստիարակել։ Ա՛յ փնթի, դու ո՞վ եղար, որ ժողովրդին ես ահաբեկում ու սպառնում... Մի՞թե կռված ու հայրենասեր մարդը կարող է այդպիսի բան ասել։ Էդ փնթին այդպես ասում է, որովհետև ինքը ժողովրդի հետ կապ չունի, նա ու իր քավորը վաղուց պիտի ցցի վրա նստած լինեին իրենց ժառանգներով հանդերձ։ Առաքել, Թոխմախի ճիճուներն են այս ազգի ընտրյալները, դրա համար այս օրին եք։ Սրանք մարմնավաճառներից էլ ավելի ահավոր են՝ իսկական Պոռնիկ։ Քանզի մարմնավաճառը իր մարմինն է վաճառում, որ մի կտոր հաց վաստակի իր երեխայի համար, բայց սրանք ազգի ու հայրենիքի մարմինն ու հոգին են վաճառում, որ իրենց պոռնիկ կանանց ոսկու ու ադամանդի մեջ լողացնեն։ Եվ հենց սրանց պատճառով է, որ պատժվում եք, հենց նրա համար, որ կամքի ուժ չունեք, որ կրթություն չունեք, էլ ու՞մ եք մեղադրում ձեր տառապանքների համար։
— Արքա, ես ասել եմ, որ այդ տառապանքները կլինեն հավերժ, քանի դեռ լռում ենք ու վախենում։

— Ճիշտ ես տղաս, այդպես է, արդեն անիմաստ է դառնում գաղափարը, արդեն անիմաստ է դառնում անկախությունն ու պետությունը, երբ ընդունակ չեք ուրախ ու երջանիկ ապրել: Աշխարհը վայելելու համար է Աստված ստեղծել, ոչ թե անիծելու ու տառապելու: Անճար մարդուն պետք է արևի լույսից էլ զրկել, որովհետև անճարին հասնում է... Այն ինչ ցանեցիք ժամանակին, այն էլ հիմա հնձում եք՝ ցանեցիք անտարբերություն ու լռություն, հիմա հավաքում եք տառապանք ու դժբախտություն... Հիմա ի՞նչ է կատարվում, ժողովուրդը կոկորդ է պատռում, թե. « Ոստիկանը ապտակել է բարի պապիկին », սակայն մեկը չգտնվեց, որպեսզի միջամտեր, թև-թիկունք կանգներ պապիկին, ներկաները՝ հասարակությունը, ինքը պետք է շանսատակ աներ այդ ապտակող ոստիկանին, որ հուր ու հավիտյան գամվեր հաշմանդամի սայլակին, որպեսզի մնացած ոստիկանների համար էլ դաս լիներ...
Անթիկունք մարդուն ապտակում են ու ծեծում, թիկունք չեղաք իրար, ձեզ կհոշոտեն: Միայն ձեր բողոքն ու դժգոհությունը արտահայտում եք սոցիալական ցանցերում, մեկնաբանության տեսքով, այն էլ առանց լուսանկարի էջով: Հետո էլ կասեք, թե ձեզ ծեծում են ու խոշտանգում... Շատ լավ էլ անում են, դուք դրան եք արժանի... Սփյուռքում՝ օտարության մեջ գոնե իրար օգնեք, իրար միս եք ուտում, իրար եք խաբում, իրար փոր թափում, հետո էլ ասում եք, թե ձեզ չեն հարգում օտարները, ինչպե՞ս կարող է հարգել ձեզ օտարը, երբ Արա Աբրահամյանի պես փնթի գեղցիներն են ներկայացնում քո ազգը, մի ճիճու, որը անգամ գրել, կարդալ չգիտի, սակայն փող ունի, մեծապատիվ բոշա, այլ անուն չենք կարող տալ, Համաաշխարհային Հայկական Կոնգրես, եփած հավի ծիծաղը կգա, էլ ինչպես օտարները կարող են ձեզ հարգել, երբ մեծամիտ ու անշնորհք եք, անշնորք ու տգետ, այս լուսավոր դարում տգետ նախարարներով ու նախագահով, տգետ մտավորականներով, ապուշ գեներալներով, ծախված կուսակցական բաշիբոզուկներով փորձում եք քծնել ու խոնհարվել անգամ ձեր դարավոր թշնամուն... Պատկերացնու՞մ ես, այս լուսավոր դարում միջնադարյան ֆեոդալական ուղեղներով Ափսո՜ս, հազար ափս-

ո՞ս… Առաքել, արդեն լուսանում է, պետք է հրաժեշտ տամ։
— Արքա, շնորհակալ եմ, ինձ համար մեծ պատիվ էր Տիգրան Մեծի հետ զրուցելը։
— Առաքել, երբեմնի մեծությունից բան չմնաց, անարգեցիք ու արժեզրկեցիք, անգամ այն փնթի տերտերն է ասում. « Ով քրիստոնյա չի, նա հայ չի » իսկ ժողովուրդը լռեց… Առաքել, հույսով լինենք ու սպասենք քո կանխատեսումներին, որ կգա մի սերունդ, որին արժանի կլինենք մենք էլ, իրենք էլ… Տղաս, հրաժեշտ եմ տալիս, սակայն հիշի՛ր, որ մեր նզովքը չի դադարի, քանի դեռ մոլորված եք ու տկար։

Գեհենի Առաքել 23/08/2015

« Հայերի մեջ ամեն տեղ անպակաս են եղեռնագործ տեր Մարկոսներ, ավազակ մելիքներ, խաբեբա Միրզա-Ֆաթալիներ, փոփոխամիտ տիկին Թարլաններ, օգտածարավ վասակներ և այլն…։ Այդ իրավ, դրանք բոլորն կան։ Բայց հայերի մեջ ամեն տեղ դըժվար կարելի է գտնել — սիրահարվածագահներ »։ Ռաֆֆի

ՍՊԱՐԱՊԵՏԸ

«Տվեք ինձ հենման կետ, և ես կշրջեմ Երկիրը »:
Արքիմեդ

Ամպրոպ էր: Ամեն անգամ կայծակի փայլատակումից լուսավորվում էր ննջասենյակը, հորդառատ անձրևը թակում էր պատուհանները և կարծես դադարելու ցանկություն չուներ: Ամբողջ օրը մռայլ եղանակ էր: Գիշերային ամպրոպի ճայթյունից քիչ էր մնում սենյակի պատերն ընկնեին ցած:

— Առաքել, քնա՞ծ ես, — հարցրեց ինչ -որ մեկը:

— Կարծես թե արթուն եմ, — պատասխանեց նա:

— Չէ՛, Առաքել, հաստատ քնած ես, եթե արթուն լինեիր, ապա չէիր լսի իմ ձայնը, ես միայն երազներում եմ հայտնվում՝ այն էլ արժանիներին:

— Կներեք, ես Ձեզ չեմ տեսնում...

Ամպրոպի որոտն ու կայծակը լուսավորեց սենյակը, մահճակալից քիչ հեռու կանգնած էր հաղթանդամ հսկա մի մարդ...

— Հիմա տեսնու՞մ ես, — հարցրեց նա:

— Այո՜, տեսնում եմ, — զարմացավ Առաքելը:

— Դա լավ է, որ տեսնում ես ու լսում: Ծատերը հիմա կույր և խուլ են ձևանում, որպեսզի ո՛չ տեսնեն, ո՛չ էլ լսեն, իսկ համրերի մասին էլ դեռ չեմ խոսում: Ճիշտն ասած, ոչ թե ձևանում են, այլ իսկապես կույր են և խուլ:
— Ինչպես հասկանում եմ, Դուք Վարդան Մամիկոնյանն եք, — հարցրեց Առաքելը:
— Այո, տղաս, հենց այն Վարդան Մամիկոնյանն եմ, որին արդեն քանի դար է խաչում եք Քրիստոսի պես: Խաչում եք ու երբեք չեք ապաշխարում:
— Սպարապետ, հայցում եմ Ձեր ներողամտությունը, թույլ տվեք ներողություն խնդրել իմ ժողովրդի անունից, ինչպես Դուք ասացիք՝ նրանք կույր են ու խուլ:
— Առաքել, ինձ պատմել են քո մասին, ու գիտես, չէի կասկածում, որ ազնվական արյուն ունես, բոլորը հպարտանում էին քեզանով, ու գիտես թե ինչու՞...
— Ինչու՞ Սպարապետ...
— Տղաս դու ինձ տեսնելուն պես ներողություն ես խնդրում ժողովրդի փոխարեն, ինչու՞ դու պետք է դա անես, եթե ասում են, որ ժողովուրդն իմաստուն է, մի՞ թե ժողովրդի փոխարեն դու պետք է ներողություն խնդրես:
— Սպարապետ, ես այդ ժողովրդի մասնիկն եմ, և ես էլ նրանց պես եմ, չեմ կարող ինձ առանձնացնել նրանցից:
— Տղաս, առանձնացնել հարկավոր է, ինչու՞, դու ինքդ լավ գիտես... Աստված աշխարհը արարելուց առանձնացրեց ցամաքը՝ ջրից, երկիրը՝ երկնքից, լույսն ու մութը, անգամ բարին և չարը: Իսկ դու ասում ես, թե առանձնանալ չես ուզում: Հենց դա է սխալը, որ պետք է առանձնանաք ու ոչ թե առանձնացնեն... Առաքել, առանձնանալու և առանձնացնելու միջև տարբերությունը մեծ է, դրանք նույն բանը չեն, չնայած որ շատ նման են իրար, սակայն իմաստները տարբեր են: Օրինակ՝ ձեզ թվաց, թե դուք անկախացել եք, իրականում դա անկախություն չէ, ձեզ թվաց, թե դուք մի ժողովուրդ եք՝ նույն հոգսերով, իրականում այդպես չէ, ժողովուրդը կիսվել է մասերի՝ սփյուռքահայ, հայաստանցի հայ, ղարա-

բաղցի ու տաճկահայ, կուսակցությունների մասին էլ խոսք չկա։ Առաքել, առանձնանալն այն է, որ ժողովուրդն ազատասեր է, իսկ իր պետությունն էլ անկախ ու ազատ։ Իսկ Առանձնացնում են ուժով ու բռնությամբ, նույնիսկ խաբեությամբ ու դավադրությամբ, ինքդ տեսնում ես, թե ինչպես են ժողովրդին առանձնացրել մասերի՝ հարուստներ, աղքատներ, անապահով ու շահագործող դաս, կրոնաազանդավորական, իսկ սեռական փոքրամասնությունների մասին չեմ էլ խոսում։ Հասկանու՞մ ես, և այդ ամենն անում են Տերերը... Տեր ունենալ, նշանակում է ոչ միայն պետք է կատարես նրա հրամանները, այլև՝ քմահաճույքները։

— Սպարապետ, իսկ Ավարայրի դաշտ մարդիկ իրենց ցանկությամբ էին գնում, թե՞ ինչ որ մեկի քմահաճույքով...

— Լավ հարց տվեցիր, տղաս, — ժպտաց սպարապետը, — գիտես, Ավարայրի ճակատամարտը սխալմունք էր, սակայն պարտադրված էինք ու պարտվեցինք մեր իսկ մեղքով...

— Ինչպե՞ս թե սխալմունք էր, — զարմացավ Առաքելը, — Սպարապետ, չէ՞ որ Դուք էիք որոշում պատերազմի սկիզբն ու ավարտը, կարող էիք շատ բան փոխել...

— Առաքել, այդպես հեշտ մի կարծիր, քանզի ճշմարտությունը վարագուրեց հենց Եշիշեն, ով գրեց Ավարայրի պատերազմի մասին, այնպես ինչպես նրան պարտադրել էին։

— Ինչպես թե...

— Այո տղաս, հենց սխալ սկսեցինք, և այդպես սխալ էլ գնաց, ինչպես ասում էին արդեն հնարավոր չէր ինչ-որ բան փոխել։ Առաքել, Ավարայրում ես չէի ուզում ճակատամարտ տալ, ինձ ստիպեցին հոգևորականները, ես գիտեի, որ մեծաքանակ պարսից բանակի դեմ ճակատ առ ճակատ կռվելը խելագարություն էր, ես մեկ այլ նպատակ ունեի, սակայն ամեն ինչ այլ ձևով ընթացավ։

— Սպարապետ, իսկ եթե գաղտնիք չէ, ի՞նչ ծրագիր էր Ձեր մեջ մտահղացել, որն այդպես էլ չհաջողվեց իրականացնել։

— Առաքել, ես գիտեի, որ մենք եռապատիկ ավելի զորքի դեմ չէինք կարող կռվել, հիմարություն էր դուրս գալ փոքրաթիվ զորքով հսկա գնդերի դեմ, չհաշված Մատյան գնդի փղերը... Հիշու՞մ

ես տղաս, Պարույր Սևակն էր ասում. « Խոստանում եմ բաց ճակատով զուր չխփվել հաստ պատերին, ինչի համար. Էլի պատը կմնա պատ, կպակասի՝ մի լավ ճակատ »: Ու անիմաստ էր գլխով Սասանյան պատին հարվածել: Քո կարծիքով ես դա չէի հասկանում, ես ամեն ինչ հաշվարկել էի ու գիտեի թշնամու ուժը և մեր հնարավորությունները: Այնպես որ, դուրս գալ բաց դաշտում հսկա բանակի ու հարբած փղերի դեմ, դա կատարյալ հիմարություն էր:

— Սպարապետ, իսկ Դուք ունեի՞ք այլ ելք, բացի ճակատամարտ տալուց, Դուք ասացիք՝ դա պարտադրված պատերազմ էր:

— Այո Առաքել, պարտադրված պատերազմ էր մեր թշնամու կողմից, բայց պարտադրված ճակատամարտ էր մեր հոգևորականների կողմից: Պատերազմը կարող ես հաղթել, եթե խելացի ես... Առաքել, ես զինվոր եմ, հայրենիքի զինվոր, ինձ համար բարոյական հաղթանակ չկա, կա՛մ հաղթում են, կա՛մ պարտվում, իսկ երրորդ չի կարող լինել, իհարկե, եթե չհաշվենք պարտադրված զինադադարը, այն էլ միայն մեծ ռազմատուգանքի շնորհիվ: Տղաս, Ավարայրի ճակատամարտը բարոյական հաղթանակ անվանեցին հենց այն սևազգեստ հոգևորականները, քանի որ հենց նրանք էին ստիպում մեզ՝ զորավարներիս ճակատամարտ տալ բաց դաշտում, այն էլ եռապատիկ ավելի թշնամու, մատյան գնդի փղերի դեմ էլ չհաշված:

— Սպարապետ, իսկ կա՞ր այլ միջոց կանխելու Ձեր ասած այդ պարտությունը:

— Իհարկե կար որդիս, ես որպես բանակի սպարապետ, առաջարկում էի թշնամուն ոչնչացնել հենց իրենց որջում՝ իրենց հողի մեջ, այն ժամանակ ոչ թե կայրվեին մեր գյուղերն ու ամրոցները, այլև՝ իրենց, իրենք կզոհվեին, ոչ թե մեր ժողովուրդը, այլ՝ թշնամու: Առաքել, պետք չէր մեծաթիվ բանակով կռվել, այլ արագաշարժ փոքրաթիվ ջոկատներով, ամեն անգամ ծուղակներ սարքելով ու հարվածելով կարող էինք թշնամու ողնաշարը կոտրել դեռ մեր սահմանին չհասած: Պետք էր անակնկալ ու գիշերային հարձակումներով հարվածել ու անհետանալ, որպեսզի չկարողանային

անգամ հետապնդելու մասին մտածել։ Հիշու՞մ ես իմ զարմիկ՝ Վահան Մամիկոնյանին (Գայլ Վահան), նա հենց իմ մարտավարական բանաձևով էր գործում։ Ի՞նչ ես կարծում, ես իմ քմահաճույքից ելնելով եմ հայոց այրուձին ու աշխարհազորայինը տարել Ավարայր, որպեսզի էշ նահատակ դառնա՞նք...
— Ո՛չ Սպարապետ, ես այդպես չեմ կարծում...
— Տղաս, ես չէի կարող ձեռքերս ծալած նստել, ժողովուրդը կույրի պես քահանաների հորդորներով էր առաջնորդվում, նրանց հորդորներով էլ գնաց Ավարայր։ Գիտես, հենց այդ քահանաները ժողովրդին ոգևորեցին, իսկ իրենք ետ քաշվեցին պատերազմի դաշտից հեռու ու եղավ դաժան մարտը։ Առաքել, մենք այլ մարտավարություն էինք ծրագրել, որպեսզի ոչնչացնենք թշնամուն հենց իր որջում՝ իր հողի մեջ, սակայն մեր հոգևորականներն անտեսեցին մեր մարտավարությունը, իրենց պետք չէր մարտավարություն, իրենց հարկավոր էր միայն Սրբացված պատերազմ, ու ամեն ինչ խառնվեց իրար, ես չուզեցի թողնել ժողովրդին թշնամու բանակի առջև միայնակ. Առաջնորդեցի, որպեսզի խուսափենք ավելի մեծ կորուստներից։ Սակայն անզոր էինք, պարտությունը եղավ, իսկ հոգևորականները դա անվանեցին Բարոյական հաղթանակ՝ հազարավոր զոհերի գնով, ու իրենց քմահաճույքը դարձավ բարոյական հաղթանակ, իրականում դա անբարոյական էր ու նողկալի։ Առաքել, ոգով ու զենքով են կռվում, որպեսզի ապրեն, մենք կռվեցինք, սակայն դավաճանությունը մեր ձեռքերը կապեց, մեր աչքերը շղարշեց ու արդյունքը եղավ այն, ինչ եղավ։ Թշնամուն պետք է հաղթես ուժով, խորամանկությամբ... Տղաս, ինչպես ասում են, պատերազմը խաղ ու պար չէ, պատերազմը հաղթելու համար գիտելիք է պետք, հնարամտություն, արիություն ու մեծահոգություն, ցավ զինվորիդ ու զորքիդ հանդեպ, վերևիվերջո անձնազոհություն, չնայած պատերազմի արվեստին տիրապետելու համար միայն ուսումը բավարար չէ, պետք է զգալ և տեսնել այն, սեփական մարմնի վրայի սպիներով պետք է զգալ դա... Իսկ ինչպես տեսնում եմ, ձեզ մոտ չափանիշները այլ են։
— Այո Սպարապետ, հիմա չափանիշներն այլ են։

— Առաքել, դու ինձ ասում ես սպարապետ, չնայած այդ բառը վեհ հնչող բառ է, և ճիճուների համար սազական չէ, չնայած դուք տեղի անտեղի օգտագործեցիք ու արժեզրկեցիք իմաստը, չհաշված այն, որ սողուն դավաճանին դարձրեցիք սպարապետ: Առաքել, մի մարդ, ով բանակում չի ծառայել, մտավոր կարողություններից ու մտածելուց զուրկ է, դարձավ սպարապետ, ինչպիսի՜ խայտառակություն, ինչպիսի՜ անպատվություն: Ինչպե՞ս կարող էիք անարգել մեր պատմությունը, մեր հերոսներին, մի՞թե չգտնվեցին մարդիկ, որոնք ասեին ճշմարտությունը... Մի՞թե ճիճուն կարող էր դառնալ սպարապետ, ես ամաչում եմ, որ ինձ հավասարեցրիք այդ աղբի հետ, ոչ միայն ինձ, այլև՝ Մխիթարին ու Նժդեհին մնացած սպարապետներին նույնպես... Աղբ, որը ապականելու է անգամ դարեր հետո եկող սերունդներին: Առաքել, սպարապետը դա հայրենասիրության ու արդարության, նվիրվածության մարմնավորում է, հաղթանակի ու պայքարի, իսկ ինչպես կարելի էր միաբջիջ սողունին օծել սպարապետ:

— Սպարապետ, ես դրա մասին բարձրաձայնել եմ...

— Առաքել, գիտեմ, կարդացել եմ Ազգադավը, բայց գիտե՞ս թե ինչն է սխալ...

— Ինչը՞ Սպարապետ...

— Առաքել, այն, որ դու չպիտի բարձրաձայնեիր, այլ ժողովուրդը, որը սպարաԾերտի ձեռքով տառապեց ու խոշտանգվեց: Առաքել, մի ծաղկով գարուն չի գալիս, մեկ ձայնը ոչինչ է ժողովրդի մեջ, ես էլ էի միայնակ, երբ խնդրում էի, որ Ավարայրի ճակատում սխալ է բաց ճակատով դուրս գալ թշնամու դեմ, արդյունքում ինձ չլսեցին, եթե լսեին, ապա ոչ թե բարոյական հաղթանակ կտանեինք, այլ հաղթական, սակայն ինչպես տեսար...

— Սպարապետ, իսկ Ճի՞շտ էր, որ Մատյան գնդի փղերի դեմ հատուկ ջոկատ էիք ստեղծել...

Վարդան Մամիկոնյանը ժպտաց:

— Իհարկե տղաս, ճիշտ է, սակայն դա եղավ արագության մեջ, քանի որ ավելի դյուրավետ պայքարի ձև կար, սակայն ուշացանք:

— Սպարապետ, եթե գաղտնիք չէ, ի՞նչ պայքարի ձև կար...

— Առաքել, ինչպես ասացի, ես առաջարկում էի պատերազմել թշնամու դեմ իրենց տարածքում՝ փոքր ջոկատներով ու անակնկալ հարձակումներով, ոչ թե հսկա բանակի դեմ, այն էլ՝ բաց դաշտում ու մեր սուրբ հողի վրա, բացի դա, ես պարսից բանակում ունեի լրտեսների խմբեր, որոնք տեղեկացնում էին պարսից զորքի տեղաշարժի մասին, չհաշված մատյան գնդում նախապատրաստել էինք մի շարք դավադրություններ, որը հնարավորություն կտար, որպեսզի փղերը չհասնեն հայոց սահմանին: Սակայն մեր քահանաները դեմ էին այդ ծրագրին ու դավաճանեցին ինձ էլ, ժողովրդին էլ, մեր պատմությանն էլ, նրանք թշնամու ձեռքը հանձնեցին իմ լրտեսներին, որպեսզի ինձ ստիպեն գործել իրենց Խաղի կանոններով: Առաքել, կրոնը վտանգավոր ու նուրբ գործիք է, այն կարող են օգտագործել որպես զենք ու այդպես էլ անում են... Աստծո անունից են նզովում և անիծում, եկեղեցու անվան տակ ժողովրդին են խաբում ու կողոպտում, ահաբեկում ու տգիտություն տարածում, դավաճանությունն ու դավադրությունները չհաշված...

— Սպարապետ, ինչպես տեսնում եմ, Դուք ևս դժգոհ եք մեր հոգևորականներից:

Սպարապետը ծիծաղեց:

— Գիտես Առաքել, դժգոհություն բառը տեղին չէր այս պարագայում: Հիմա դու կմտածես, որ մենք՝ ես, Անդրանիկը, Կոմիտասն ու Ռաֆֆին գալիս ենք դժգոհելու և գանգատվելու համար, բայց դա այդպես չէ, մենք չենք դժգոհում, չենք բողոքում, չնայած որ դրա իրավունքը ունենք... Դուք և ձեր գաղափարները... Մենք՝ մեծերս երբեք էլ չենք դժգոհել, միայն ուսուցանել ենք և խորհուրդներ տվել, նաև տառապել ենք, տառապել ենք ժողովրդի հիմար խելքից, որ չկարողացաք դարեր շարունակ ապրել թշնամիների մեջ ու սովորել նրանցից... Առաքել, թշնամուց սովորելը ամոթ չէ, պետք է խելացի լինել, մենք չկարողացանք մեր սխալների վրա ապագա կառուցել, այնպես կառուցել, որ հետո փոշմանելու կարիք չլինի... Չկարողացանք սովորել ուրիշ ազգերից, չկարողացանք սովորել մեր սխալներից... Հապա ինքդ ասա, արդյոք մենք դժգո-

հելու և բողոքելու իրավունք ունե՞նք...
— Ճիշտն ասած, Սպարապետ, ես կիսում եմ Ձեր կարծիքը, մենք պետք է սովորեինք Ձեր սխալներից...
— Առաքել, իսկ ի՞նչն է խանգարում սովորել, օրինակ ֆրանսիացի ներից...
— Ի՞նչ նկատի ունեք Սպարապետ, ֆրանսիացիներ ասելով...
— Առաքել, Նապոլիոնին հաճախակի եմ տեսնում, գիտես թե ինչքան ենք զրուցել նրա հետ, նա խոստովանել է, որ ինձանից, այսինքն հայերից է սովորել ռազմարվեստի գաղտնիքը, հպարտանում էր և երախտապարտ էր մեզանից... Առաքել, ֆրանսիացիք մեծ ժողովուրդ են, խելացի, ներողամիտ են ու բարի, սակայն իրենց թշնամիների հանդեպ շատ դաժան են և անհանդուրժող: Նապոլեոնը տաղանդավոր լինելով հանդերձ՝ նորից սովորում էր ու կրթվում, որովհետև ինչպես ասում էր. « Թե միևնույն է հարյուր տարի էլ սովորի, էլի սովորելու շատ բան ունի »: Իսկ մենք հայերս, փոխանակ սովորելու ու կրթվելու, մեզ դրել ենք Նապոլեոնի տեղը՝ ամեն մեկն իրեն գիտունի ու զորավարի տեղ է դրել, ամեն մեկն իրեն արքա և առաջնորդ է հռչակում, իրականում անողնաշար, միաբջիջ ոչնչություններ են: Առաքել, Ֆրանսիան մեկ Նապոլեոն ծնեց, մինչդեռ Հայաստանի ամեն մի թաղամասը մի քանի Նապոլեոն ունի: Ամեն ինչ իրար են խառնել, օլիգարխները հա՛մ գիտնական են, հա՛մ գործարար, հա՛մ դասախոս կամ կոմպոզիտոր, բանաստեղծ ու ռեժիսոր, բարեգործի ու բարերարի մասին էլ չեմ խոսում: Իզուր չէր խեղճ Նապոլեոնը գանգատվում մեզանից՝ հայերիցս: Բավական չէ էս փնթիները մեզ՝ ձեր մեծերին են նվաստացնում, հիմա էլ անցել են համաշխարհային մեծություններին: Առաքել, սովորելը ամոթ չէ, չսովորելն է ամոթ: Մեծ մեծ խոսելով ու ամպագոռգոռ բառեր ասելով մեծ չեն դառնում: Ինչ որ ղարաբաղցի երկու տգրուկի պատճառով ժողովուրդը սկսում է իրար հոշոտել, երկու տականք ձեզ բաժանել են իրարից, ձեզ հանել են իրար դեմ, շատերը խամաճիկների պես պտտվում են նրանց շուրջը, ու դուք թշնամի եք փնտրում սահմանի մյուս կողմում, մինչդեռ չեք գիտակցում, որ հենց նրանք են ձեր թշնամ-

իները։ Առաքել, հենց այն կույր ու համր ձևացող մարդիկ են վընտանգավոր, որովհետև նրանք ամեն գնով արդարացնելու են հանցագործին, նրանք են ժողովրդի մեջ գցում երկպառակությունը։ Այդպիսի մարդիկ են մեր թշնամին։ Ներքին թշնամին ավելի վընտանգավոր է, քան թե արտաքին։ Իզուր չէ Նժդեհն ասում. « Ներքին տականքներն են ժողովրդին ու պետությանը վնասում ավելի, քան թե արտաքին թշնամին։ Ներքին թշնամին զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնամու »։
— Սպարապետ, այո մեր մեջ է սխալը, ոչ թե թշնամու... Թշնամին՝ թշնամի է և իր թշնամությունը պետք է անի։
— Կեցցե՜ս տղաս, լավ ասացիր, սակայն ո՞վ է մեզ խանգարում պատժել թշնամուն... Ով թշնամու ջրաղացին ջուր է լցում, նա թշնամի է, դավաճանը՝ թշնամի է, աստվածապիղծը՝ թշնամի է, գողն ու ավազակը թշնամի է, անգամ խաբեբան է թշնամի... Առաքել, դու հարցնում էիր, թե հոգևորականներից դժգո՞հ եմ...
— Այո՛ Սպարապետ։
— Առաքել, ինչու՞ են մեր հոգևորականները թույլ տվել, որպեսզի գոհանանք իրենցից, բոլոր խարդավանքներն ու սև գործերը նըրանց հովհանավորությամբ է իրականացվում, ինքդ տես՝ Գարեգին Բ-ն, Կճոյանը, Սյունյաց ու Շիրակի թեմերի հովիվները, նրանք « Լեքսուսներով » ու շքեղ « Բենթլիներով » են շրջում, իսկ ժողովուրդը սոված է ու ահաբեկված։ Հիմա ի՛նքդ ասա, նրանցից պետք է դժգոհե՞լ, թե՞ պետք է նրանց պատժել։ Տղաս, ես հավատացյալ մարդ եմ, հասկանում եմ Սուրբ գրքի մեկնությունը։ Հիսուսը, երբ այցելեց Երուսաղեմ ու մտավ տաճար, տեսավ, թե ինչպես են իր հայրական տունը դարձրել մի մեծ վաճառատեղի, ապա նա շրջեց չարչիների ու առևտրականների սեղանները ու դուրս շըպրտեց նրանց Աստծո տաճարից։ Այդպես էլ պետք է մենք անենք, բռնենք բոլոր դավաճաններին ու դուրս շպրտենք մեր երկրից՝ անկախ նրանից, թե նա հոգևորական է, թե շինական, իշխան կամ զորավար։ Իսկ ազգադավների մասին չեմ ասում, Տիգրան Մեծը պատմում էր, թե ինչպես էր պատժում նրանց, կարծում եմ, որ նրանք արժանի էին գամվելու անարգանքի սյունին։

— Այո, Սպարապետ, Տիգրան Մեծը ինձ պատմել է դրա մասին...
— Գիտես սխալը սխալի ետևից, փոխանակ պետական մտածելակերպ ունենանք, մենք հակապետական ու հանրապետական ենք դառնում, փոխանակ արդարություն սիրենք, սիրում ենք դավաճանություն ու անհատապաշտություն: Տես ինչպիսի ժողովուրդ ենք... Տգիտությունը խավարեցրել է մեր միտքը ու այդպես էլ դառնում ենք խավարամոլ ու խավարասեր: Շատերը գիտեն, թե ինչ էր Նապոլեոնի ձիու անունը, մինչդեռ իրենք չգիտեն իմ ձիու անունը, այսքանից հետո ուզում են գոհունակություն հայտնենք մեր ժողովրդին:
— Սպարապետ, իսկապես ինքս էլ չգիտեմ Ձեր ձիու անունը, ինչքանով ինձ հայտնի է մատենագիրները ոչինչ չեն գրել ձեր ձիու մասին:
— Տղաս, իսկ մատենագիր ասելով ու՞մ նկատի ունես... Հենց այդ մատենագիրները այն նույն հոգևորականները չէի՞ն, որ սպանեցին Պապ թագավորին, նույն հոգևորականները չէին, որոնք այրեցին Մովսես Խորենացուն ու դրանով չբավարվեցին, նրա մոխիրն ու այրված գրքերը լցրեցին գետը, Թոնդրակեցիներին ու Պավլիկյաններին խաչում էին ու կենդանի կենդանի այրում, դեմքներին աղվեսադրոշմ խարանելով... Ինչ է, ուզում ես շարունակե՞մ թվարկել՝ Գարեգին Բ, Կճոյան, Տեր- Հուսիկ...
— Բավական է Սպարապետ, — ընդհատեց Առաքելը, — ես գիտեմ, թե ինչեր են արել նրանք...
— Առաքել, տղաս, հարցը հավատքի մեջ չէ, այլ հոգևորականների... Մեր հավատքը սուրբ է մեզ համար ու նվիրական, սակայն այդպիսի աստվածապիղծ հոգևորականներն են, որոնք ամեն ինչ խառնել են իրար՝ բարոյականը՝ անբարոյականի, ազգադավին՝ հայրենասերի հետ, թացը չորի հետ վառվում է գնում...
Հոգևորականն աչքի լույսի պես պետք է պահի, փայփայի իր հոտը, ոչ թե հանձնի գայլերին՝ հոշոտելու... Եթե հոտի հովիվն անգործ է ու անպետք, նրան պետք է տալ գայլերին, ոչ թե պետք է արդարացնել, որովհետև նա հովիվ է: Աստված մարդուն ստեղծել է որպես աստվածահաճո արարման պտուղ, սակայն այդ պտուղ-

ից էլ ծնվեցին Կայենը, Հուդան ու մնացած տականքները։ Ու Աստված որպես դատաստան պատժեց Սոդոմի ու Գոմորի բնակիչներին։ Հիշու՞մ ես ծծմբե անձրևը, հիշու՞մ ես Սարային, ով քարե արձան դարձավ, նա միայն պատժվեց Աստծո պատվիրանը չկատարելու համար։ Տեսնու՞մ ես, Աստված ևս պատժում է, իսկ ինչու՞ չպետք է պատժենք մենք... Մենք Աստվածներ չենք, սակայն մենք պարտավոր ենք պահել Աստծո տված պատվիրանը... Առաքել, հոգևորականներն իրենց ձևով մեկնաբանեցին Սուրբ գիրքը և օգուտ ստացան։

— Այո Սպարապետ, այդպես անում են և հիմա, ժողովրդին կողոպտում են, եկեղեցիներ են կառուցում աստվածապիղծների գումարներով, այդպես արել են անցյալում ու շարունակում են հիմա... Հիսուսը ասում էր. « գալու են իմ անունով սուտ մարգարեներ ու ժողովրդի մեջ երկպառակություն տարածեն...»։

— Տեսնու՞մ ես Առաքել, սուտ մարգարեներ... Իսկ ինչու՞ չլսել մեր Մարգարեներին, որոնք ժողովրդի մասին էին մտածում՝ Ֆրիկը, Խորենացին, Ռաֆֆին, Աղայանը ու Թումանյանը, կամ Սայաթ Նովան... Ի՞նչ պակաս Մարգարեներ են... Նրանք քարոզում էին ազատություն, նրանք ուսուցանում էին արդարություն, ազնվություն, զենքի ու պայքարի, սիրո մասին... Մի՞թե չկարողացաք հավատալ նրանց, սակայն հավատում եք ինչ-որ եվրոպական կեղծ աղանդավորներին, որոնք իրենց սրբերի տեղ են դնում, իրականում նրանք ոտքից գլուխ մեղքերի մեջ թաղված են...

— Սպարապետ, հիմա աղանդներն այնքան վտանգավոր չեն, որքան Դուք եք կարծում։

— Գիտեմ Առաքել, վտանգավորը աղանդները չեն, այլ Առաքելական հավատքի հոգևորականները... Փոխանակ նրանք սերմանեն ազնվություն ու բարություն, նրանք կառուցում են դղյակներ ու ապարանքներ, պոռնիկների հետ են զվարճանում։ Կարող էին չէ լավը անել, օգնել սովահար ու տանջված ժողովրդին, սակայն նրանք ոչինչ չարեցին, մատը մատին չտվեցին, մինչդեռ Տերը պատվիրում էր կիսել ունեցած հարստությունդ, որպեսզի Աստվածահաճո լինես... Հիմա ասա, կարո՞ղ եմ հավատալ դրանց... Կարո՞ղ

եմ ինչ-որ լավ բան ակնկալել դրանցից։
— Ամեն ինչ ճիշտ է Սպարապետ...
— Առաքել, սկզբից հոգևոր առաջնորդը պետք է ազնիվ լինի, որպեսզի իր շուրջը հավաքի ազնիվներին ու իմաստուններին, սակայն ինչպես տեսնում եմ այսօր գրպանահատին դրել եք կաթողիկոս...
— Այո՜ ցավոք սրտի այդպես է... Սպարապետ, կներեք, Դուք այդպես էլ չասացիք Ձեր ձիու անունը։ Ինչքանով հիշում եմ Նապոլեոնի ձիուն կոչում էին Բուցեֆալ։ Իսկ Ձերը՞...
— Առաքել, իմ ձիու անունը Լֆիկ էր ու շատ հավատարիմ ընկեր էր, ոչ թե ձեր լֆիկի պես հարամ շուն։ Առաքել, հավատարմությունը կարևոր է, ձիերը, շները հավատարիմ են լինում մինչև կյանքի վերջ, միայն մարդ արարածն է, որ հավատարմությունը ոտնահարում է, նրանք են դավաճանում ընկերոջը, ու գիտես չէ, այսօր կդավաճանեն ընկերոջն ու կնոջը, իսկ վաղն էլ՝ ծնողին ու հայրենիքը։ Առաքել, շատ հայ տղամարդիկ իրենց կանանց դավաճանում են ու գիտես չէ թե ինչու՞...
— Ինչու՞ Սպարապետ...
— Որովհետև Առաքել, իրենց արյունը կեղտոտ է, որովհետև իրենց գեներում կա հենց այդ դավաճանի գենը։ Ու շատ ժամանակ հայ տղամարդիկ խնջույքների գնալիս, իրենց կանանց չեն տանում՝ թողնելով տանը, որպեսզի նայեն ուրիշների կանանց հետույքներին։ Տեսնու՞մ ես, իրենց կանանց հետույքները թողած՝ աչքերն ու ձեռքերը ուրիշների հետևին է... Առաքել, հետև ասեցի՝ միտս եկավ, Է՛ն ճիճու Մանվելը, ով իրեն Արցախի հերոս է հռչակել, որը գեներալ ու առաքյալ է կոչվում... Գիտե՞ս չէ, թե ինչու է այդպես գործում...
— Ինչու՞ Սպարապետ...
— Որովհետև անպատիժ է տղաս, հենց այդպես անպատիժ էլ գործելու են նրա լամուկները, նրա լամուկների՝ լամուկները... Ճիշտն ասած, Թեհլերյանն էր ուզում գալ, սակայն ես շատ բան ունեի ասելու... Հա, խոսքս կիսատ մնաց, մոռացա, թե ինչ պիտի ասեի...

— Սպարապետ, Դուք խոսում էիք Մանվելի լամուկներից, — հիշեցրեց Առաքելը։
— Հա՜ Առաքել, իսկապես, տեսնում ես Մանվելի լամուկը, Սաշիկի, Գալուստի, Անդրանիկ Մարգարյանի, Լիսկայի, Խաչատուրովի ու Սեյրան Սարոյանի, իսկ թուլեքը իրենց հայրերին գերազանցում են իրենց ոճիրներով։ Ու գիտե՞ս չէ, թե Թոխմախի Միերները գործելու են անպատիժ, քանի հասարակությունը դա թույլ է տալիս։ Առաքել, քո կարծիքով Վահան Մարտիրոսյանն ինչու՞ փախավ հենց Ադրբեջան, այլ ոչ Վրաստան կամ Եվրոպա։
— Սպարապետ, ես նրան չեմ մեղադրում...
— Ա՜յ տեսնու՞մ ես, դու չես մեղադրում, որովհետև դու պա՜րզ ու արդար մարդ ես, սակայն շատերն են նրան մեղադրում, շատերը նրան կախաղան են հանում կամ գնդակահարում որպես դավաճանի...
— Այո Սպարապետ, դա այդպես է, ժամանակին էլ Նաիրի Հունանյանին էին այդպես պիտակում, այդպես էին անարգում։ Արդյունքում ժողովուրդը այդպես էլ չիմացավ, թե Նաիրին ինչու գնաց այդ ինքնազոհաբերությանը։
— Առաքել, ճիշտ ես որդիս, քանի որ հեշտ է քարկոծել թույլին, հեշտ է ընկածին հարվածել, իրականում Թոխմախի Միերները օգտվում են այդ շողոքորթներից, հենց այդ սուտ աղաղակող տականքների օգնությամբ են նրանք անպատիժ գործում։ Վահան Մարտիրոսյանին քարկոծողներից ոչ ոք չբարձրաձայնեց, երբ Թոխմախի ենիչերիները մոր արգանդում մանուկին էին սպանում, ոչ ոք չբարձրաձայնեց, ո՛չ հասարակությունը, ո՛չ հոգևորականները, ոչ իրավապաշտպաններն ու մտավորականները։ Իսկ գիտե՞ս չէ, ինչու ձայն չհանեցին...
— Ինչու՞ Սպարապետ...
— Որովհետև իրենք ևս նմանվել են թոխմախի միերներին, շմայսներին ու լիսկաներին, նազիկներին ու մանվելներին յուվեցի կարոներին ու մնացած ապուշներին, ահա թե ինչու լռեցին։
— Սպարապետ, դա նորմալ է, շատ ժամանակ ինձ անվանում են ադրբեջանցի գործակալ ու ես սովորել եմ, փորձում եմ չպատաս-

խանել, միևնույն է անօգուտ է, անուղեղներին ինչ-որ բան հասկացնել։
— Առաքել, ի՞նչ անուղեղ, դու սխալվում ես, նրանք ինձնի՛ց էլ, քեզնի՛ց էլ հասկացող են, երբ իրենց խոշտանգում են Սերժիկն ու Սաշիկը, Լևոնն ու Ռոբերտը՝ դա կարելի է, դա չեն որակում Ադրբեջանի գործակալ, այն որ դու ասում ես ճշմարտությունը, ուրեմըն գործակալ ես... Առաքել, ճշմարտությունն ասելուց չպետք է վախենալ, քանզի խուսափելով ասել ճշմարտությունը, մենք ստի համար ենք ճանապարհ հարթում։ Ինչու՞ ոչ ոք չմտածեց, որ հայ մանուկ են սպանում, այն էլ՝ մոր արգանդում... Ի՞նչ է սպանողը Սաֆարով չէ՞ր... Իսկ կուրսանտ՝ Հայկազ Բարսեղյանին ո՞վ սպանեց քնած ժամանակ, ռազմական բժիշկ Վահե Ավետյանին, ազատամարտիկներ Հրաչ Մուրադյանին ու Վարդան Թումասյանին նորի՞ց Սաֆարովը սպանեց... Այս չծնված մանուկը ինչու՞ պետք է հոշոտվեր հասարակության կողմից պահած փայփայած՝ Թոխմախի մհերների կողմից... Հիմա ասե՛ք, Թոխմախի մհերը, մանվելն ու նազիկը, սերժիկն ու սաշիկը, ռուբիկն ու լևոնը՝ ինչու՞ թըշնամի չեն. Թշնամին դու և Վահան Մարտիրոսյա՞նն եք... Հիմա եթե ժողովուրդը լռում է ու թույլ է տալիս, որ իրեն հոշոտեն, ապա ոչ Աստվածը և ոչ որևէ հրաշք նրանց չի կարող փրկել։
— Սպարապետ, ազատամարտիկ Սուսաննա Մարգարյանի մասին լսե՞լ եք...
— Այո՛, լսել եմ տղաս, գիտես նա մեծ գործ է անում, բայց ու՞մ համար, ինքն այրվում է, սակայն գնահատող չկա, մարդիկ չգիտեն գնահատել և արժեքավորել իրենց կողքին կանգնած հերոսներին, հասկանում ես, պետք է գոնե գնահատող լինի, ամբողջ տաս միլիոն ազգի մեջ մի քանի հազար, պատկերացնու՞մ ես...
— Այո Սպարապետ, իրավացի եք, տիկին Սուսաննայի ասելով ընդամենը 13 հազար ստորագրություն է հավաքվել...
— Առաքել, իսկ սփյու՞ռքը, լավ Հայաստանում են վախենում ու չեն ստորագրում, իսկ սփյուռքում... Ինչու՞ են նրանք վախենում, մի՞ թե քրդերը մեզնից ավելի պատվով են, մի՞ թե նրանք կարող են, իսկ մենք ոչ, վրացիներին են անուն կպցնում։ Հապա ինքնե-

րը դ նայեք, երբևիցե ձեզ նայեք, արդյո՞ք մի օր ինքներդ ձեզ հարց տվել եք, թե Թոխմախի Միերից ինչով եք տարբերվում...
Ծմայսը բոնաբարում է ու գլխատում, մանվելները սրա նրա հետևին են ձեռք տալիս, Լևոն Երանոսյանը ականջներն է կտրում, Յուվեցի Կարոն՝ գլխից է խփում, իսկ Թոխմախի միերն էլ մանկասպան է... Հիմա ի՛նքդ ասա, սա երկի՞ր է, թե՞ սպանդանոց, որտեղ աճում ու բազմանում են ոճրագործ դահիճները: Ու գիտես այդ ամենն արդարացվում է ամեն ձևով՝ ոճրագործին սպարապետ դարձնելով, մարդասպանին՝ գեներալ, բոնաբարողին՝ քաղաքական գործիչ իսկ մանկասպանին՝ պատգամավոր ու ընտրյալ... Սերժիկի ու Սաշիկի մասին էլ չեմ ասում... Հա, Ռոբերտ լայնաբերանն ու Գարեգին Աստվածապիղծն էլ վրադիր... Առաքել, սրանից հետո իմացեք, որ մենք՝ Մեծերս չենք բողոքում և դժգոհում, մենք միայն նզովելու ենք, որ չկարողացաք պայքարել և գտնել ձեր ինքնասիրությունն ու պատիվը, իսկ ինչպես գիտես, անիծվածներն անգամ Աստծո ու արևի լույսից են զրկվում: Խավարի մեջ կլինեք այնքան ժամանակ, քանի դեռ խավարամոլներն են ձեզ իշխում:
Որոտաց ամպրոպը, ճայթեց կայծակը, սենյակում լռեց ձայնը, Սպարապետը անհետացավ՝ առանց հրաժեշտի:

Գեհենի Առաքել 19/09/2015

ՆԺԴԵՀԻ ՆԶՈՎՔԸ

« Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն » :
Գարեգին Նժդեհ

« Այս դառն օրերի մթնում մահաբեր,
Արնոտ խնջույքի այս սեւ զնդանում
Դավաճա՛ն է նա, ով լռում է դեռ,
Մատնի՛չ է, ով իր սուրը չի հանում...»
Վահան Տերյան

Իսկ ո՞վ ասաց, որ նահատակները չեն տեսնում և լսում... Նրանք ո՛չ միայն տեսնում և լսում են, այլև տառապում են և նզովվում... Ուրախանում են, և հրճվում ժողովրդի հետ միասին: Մեր նզովքը հենց այնպես չէ, քանի որ դուք դա վաստակել եք ու արժանացաք դրան, հենց ձեր պահվածքով, ու որովհետև ուրացաք ձեր մեծերի պատգամն ու թողած ժառանգությունը, նույնիսկ ձեր զավակներն են լինելու այդ նզովքի գերին... Դու՛ք էիք, որ ուրացաք ձեր նահատակներին ու մեծերին, Աստծո և ճշմարտության խոսքը... Հիմա կասեք, թե ժողովուրդը քնած է ու միասնություն չկա, ու էլի նման հիմարություններ... Ի՞նչ միասնություն, երբ ձեր հոգին մեռած է, մեռած է, ոչ թե քնած: Մեռած մարդուց ոչինչ մի սպասեք, մանավանդ նզովված: Նզովված, որովհետև ուրացաք Աստծո ամ-

ենասուրբ պատվիրանը՝ Ազատություն ու մարդ մնալու վեհ գաղափարը, հիմա էլ հույսներդ դրել եք մի Առաքելի վրա, որը իրեն դրել է առաքելի տեղ, շեփորահարելով ու թմբկահարելով ուզում է ժողովրդին արթնացնել։ Ժողովուրդը վաղուց արդեն մեռած է, արդեն քսան տարուց ավելի, այդպես քնել չի լինում...
Ազգի թշնամին տզրուկի պես կպել է երկրի կենսատու երակին ու ծծում է նրա արյունը, ուղեղն սնուցող երակն է ծծում... Գիտե՞ք տզրուկը նույնիսկ իր չափը գիտի, երբ հագենում է պոկվում է ու ընկնում, սակայն այս հրեշները ինչքան ծծում են, այնքան ավելի է ախորժակները բացվում... Ծծում են, ծծում... Չեմ հասկանում, Է՛ս ժողովրդի մեջ մենակ մնացել են ծծողներն ու մեռածները, մեկը չկա՞, որ մի շիկացած շամփուր հետևին կպցնի, որպեսզի, ոչ թե արթնանա այլ հոգեդարձ լինի ու հոգեդարձ լինելով կարողանա գոնե գիտակցել, թե իր թշնամին որտեղ է։ Հարյուր հազար անգամ թուխթ ու պատգամ գրեցի, ես էլ, Խորենացին ու Բյուզանդը, Ռաֆֆին էլ Նալբանդյանը, Չարենցն ու Տեյրանը, Սևակն ու Ճիրազը, մի՞թե այդ ամենը քիչ էր սովորելու համար, մի՞թե այդ ամենը իզուր է ասվել ու գրվել։ Ո՞վ է տեսել, որ կոմսոմոլի վիժվածքը դառնա իմ գաղափարախոսության կրողը, բավական չէր սպարապետ դարձրեցիք, հիմա էլ դարձնում եք Նժդեհի գաղափարակիցը, էլ չասեմ որ Է՛ն վիժվածքին՝ Վերջին Բոլշևիկին, որ իր չեկիստ հալով դարձել է իմ գաղափարի ժառանգորդը։ Չեմ հասկանում այս մեռելների մեջ մի կենդանի մարդ չկա՞, որ ասի. « Ա՛յ սերունդ, ինչու՞ ես տխմարացել, չե՞ս տեսնում, թե ովքեր են քո սնուցող երակից օգտվում... Մինչև ե՞րբ կեղտոտ արգանդի դուրսպրծուկ՝ կռազի շոֆեռը պետք է սերունդներ կրթի, երբ ինքը անտառաճանաչ է ու անգրագետ, մինչև ե՞րբ պետք է նա անպատիժ մնա, երբ մեզ՝ նահատակներիս շիրիմները պղծում, իր մոլագար քավորի մեդալները շնորհելով։ Իսկ ամենամեծ ապուշի մասին չեմ ասում, որ անգամ « Դուն » ու « Դուքը » իրարից չի տարբերում, վարունգն էլ խիյարից, մեկը չկա, որ Է՛դ իր ասած թարս աճած խիյարը հետևը մտցնի ու թքի երեսին ու ասի, ա՛յ թորվածք, դու՛ ո՞վ եղար, որ Պարույր Սևակի սուրբ խոսքերը քո պիղծ շուրթեր-

ով ես արտասանում, դու՛ ո՞վ ես, որ անկախությունից ու ազատությունից ես խոսում, երբ քո կուսակցական եղբայրները հարյուր հազարավոր ազատության դրոշակակիրներին խոշտանգում էին ու Սիբիր աքսորում: Մի՞թե հոգեդարձ չեք լինելու ձեր հանդերձյալ վիճակից... Ու մի ասեք, թե դժոխքը երկրի վրա է, որովհետև դուք թույլատրեցիք, որ չարիքը ձեզ իշխի, դուք ինքնակամ ընդունեցիք չարիքի իշխանությունը: Ձեր կարծիքով դավաճանների մասին հենց այնպես ենք գրել, ես էլ, Ռաֆֆին էլ, մնացածների մասին չասեմ: Ու չեք ազատվելու... Մնալու եք նզովքի մեջ այնքան ժամանակ, մինչև հոգեդարձ չլինեք ու չհասկանաք որ, մինչև չկարողանանք ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք: Եթե հույսներդ դրել եք, թե երկնքից մանանա կթափվի ձեր հնազանդության համար, ապա սխալվում եք: Ժողովուրդը Դեր-Զոր ճամփա ընկավ այդ մըտքով, ու տեսանք, թե ուր հասան... Զեյթունցու ու Սասունցու պես պետք է Աստվածավախ լինել ու հասկանալ, որ Աստված վախկոտներին ու տկարամիտներից երես է թեքում, նրանց համար անգամ դրախտի դռներն են փակ, ուրեմն հասկացեք գոնե մեկ անգամ, Աստծո անունով զենք վերցրեք ու ապրեք մարդավայել, ոչ թե ստրուկի պես տառապանքների ու արցունքների մեջ: Փրկվելու համար պէտք է նաև արիանալ, այսինքն՝ հաղթահարել սեփական սարսափը: Սարսափից ազատագրված հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայորեն տեսնել, պատկերացնել: Պատերազմների մէջ հաղթանակում է արին, այս նշանակում է՝ հաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ով թշնամու հետ չափվելուց առաջ կառուցել է հաղթանակի շենքն իր հոգում: Ոչ թե անտարբեր նայեք, թե ինչպես են ձեր զինվոր զավակներին խոշտանգում ու ինքնասպանության հասցնում, ու հետո էլ ընդունում եք, թե նա զոհվեց հանուն հայրենիքի կամ ժողովրդին պաշտպանելով: Ձեր մատաղ սերունդին մատաղ անելով այն չարիքին, որի հպատակները դուք եք, մի՞թե մեր թողած ժառանգությունը քիչ էր հասկանալու համար, որ ներքին թշնամին զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնամուն, նրան երբեք չի կարելի ներել անկախ

նրանից թե ով է, ինչ սեռի ու դավանանքի է: Թշնամու մի հանցանքը ներել նշանակում է նորե՛րն արտոնել: Սրբապիղծ հոգևորականը դավաճան է, պետք է կախաղան հանվի, անպատասխանատու հրամանատարը դավաճան է, ծախված մտավորականը դավաճան է, կույր կուսակցականամոլը դավաճան է, անգրագետ ուսուցիչը դավաճան է... Անտարբեր իշխանավորը դավաճան է ու հավատացե՛ք, որ ազգադավներով ու դավաճաններով պետություն չեն կառուցում, անգամ դրախի դռները փակվելու են նրանց առջև, ովքեր տեսնում են ու լռում, ովքեր հանդուրժում են Չարիքի իշխանությունը: Կենսաբանորեն անբարոյական է այն ժողովուրդը, որի մեջ զինվորը ներքին թշնամիներ ունի: Չկան անտականք ազգեր, բայց հայ տականքը կմնա անմրցելի: Ու այդ ամենը փոխելու համար միայն զենքը բավական չէ, հարկավոր է հավատք... Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետություն ստեղծել: Անկախութեան հավակնություն ունեցող ժողովուրդները նախ պետք է այս մտայնությունից ազատվին: Արևի ու Աստծո լույսը տրված է միշտ արժանավորներին, իսկ ստրկամիտներին անգամ արևի ջերմությունը չի հասնում այդպես է ստեղծել Աստված: Աստված ուժեղներին է սիրում և իմաստուններին ու երբ հասկանաք որ դժբախտները ու մորթապաշտները տեղ չունեն երկրի վրա նրանց տեղը դժողքն է և այն իրենց կառուցած դժոխքն է որի մեջ այրվում են: Ապրելու համար բավական չէ՛ իր ազգի զավակը լինել, պէտք է նաե՛ւ նրա հրաշունչ զինվորը լինել: Հայրենիքը մեզ տրված է Բարձրյալի կողմից ու պետք է այն դարձնել դրախտ ոչ թե դժոխք... Եթե խոսքդ Հայրենիքի մասին է, մի խոսիր, այլ խոսեցրու Հայրենիքը: Այս ձեւով վարվիր եւ հերոսների եւ նահատակների նկատմամբ: Մի խոսիր, այլ խոսեցրու նրանց. Խոսի՛ր, զգալով նրանց սրտի զարկը, շունչը, ներկայությունը: Քո մեջ մի գանձարկղ կա անբավ ու անհաշիվ հարստությամբ, բայց դու չես օգտվում նրանից, որովհետև քեզ պակասում է այդ արկղի ոսկե բանալին՝ ինքնաճանաչությունը: Ծանի՛ր քեզ... Նույնացի՛ր քո ներքին մարդու հետ, և դու պիտ զգաս քո մեջ ծովացումը հոգեկան նորանոր ուժերի, դու պիտ դառնաս

ավելի քան զորեղ և ապա պիտ կարողանաս կապել բախտի անի-
վը և քարշ տալ ցանկացածդ ուղղությամբ։
Բազում կարիքների տեր անհատներն ու ժողովուրդները կլանվ-
ած են լինում ներկայով և մոռանում իրենց անցյալն ու ապագան։
Ունայնամտանում և տկարանում են նմանները։ Մի՛ լինիր ուրիշի
ստվերը, արձագանքը, եթե այդ ուրիշը անգամ աշխարհածանոթ
համբավ լինի։ Ստեղծագործո՛ղ, և ոչ ընդօրինակող։ Ապրելում են
ապրելու համար ոչ թե անիմաստ պայքարել մեռնելու համար...
Աստված տվել է կյանքը ապրելու ու վայելելու աշխարհը, զգալ սե-
րն ու հավատարմությունը, այլ ոչ թե դավաճանների ճիրաններ-
ում տառապելու։ Հայրենիքներն ապրում են հայրենասիրությ-
ամբ, մեռնում հայրենասիրության պակասի պատճառով... Մի մո-
ռացի՛ր մեռիր այնպես, որ մահդ անգամ ծառայի ՀԱՅՐԵՆԻՔԻԴ։
Քանի դեռ չենք հասկացել ճշմարտության խոսքը, միշտ մնալու
եք նզովքի մեջ՝ մնալու եք դժոխքում գամված հավիտենս հավի-
տենից։

Գեհենի Առաքել 8/01/2016

*« Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն որ հայը իր պա-
տմությունից բնավ չի սովորում : Պատմության մեջ նախընթացը չունեց-
ող մի ողբերգություն է խաղացվում Հայոց աշխարհում, մի արնոտ խաղ,
որի գործող անձինք, որի դերակատարներն են բռնությունը, բռնության
կենդանի գործիքները՝ հայ ժողովրդի տականքը, և բռնության զոհերը
ինքը՝ հայ ժողովուրդը։ Կեղծել պատմությունը, ասել է՝ վտանգել նրա
հոգեւոր առողջությունը, խեղել հոգին, ծռել նրա զարգացման ճամփան,
անիրավել ն րա մեծ մեռելներին, ովքեր ընկան, որ հայրենիքը սրբանա ու
ապրի, շփոթի մատնել պատմության ենթակայի ներկան եւ խաբել գալոց
սերունդներին։ Պատմության դառնադառն դասերից խրատված՝ նա
գիտի այժմ, որ անիրավված ժողովուրդների արյունն ու արցունքը պիտի
չդադարի, մինչև որ նրանք ինքնօգնությամբ ոտքի չկանգնեն, մինչև
չիզորանան հոգով։ Չկա ավելի մեծ պղծություն, քան հարազատ
ժողովրդի պատմության չարամիտ աղավաղումը »։ Գարեգին Նժդեհ*

« Այս և այսպես են թշվառաբանում հայրերիցդ ոմանք, որոնք կեղծում են, թե չգիտեն, որ ազգերը երկաթով ու արյունով են հարթել իրենց պատմական ճամփան, որ ազգերի բարօրությունը ձեռք է բերվում արյունով ու արցունքով, որ ազգերի անցած ճամփաները շարունակում են ծածկված մնալ մարդկային գանգերով։«Հաղթությունը չի պտղաբերի, մինչև որ դաշտերը չոռոգվեն արյամբ»։ Գարեգին Նժդեհ



ՄՈՆԹԵ

« Ստրուկների մէջ կարող է Սպարտակ ծնուել,
ստրկամիտների մէջ՝ երբեք »:
Վարդգէս Օվեան

Գիշերային լռության մեջ որոտաց ամրոպը, հորդառատ անձրևը կարծես հենց դրան էր սպասում, հեղեղի պես թափվեց երկրի վրա, որոտի արձագանքը դեռ լսվում էր լեռների ետևից: Քամու հզորությունը ու անձրևի խոշոր կաթիլները կատաղած թմբկահարում էին պատշգամբի ապակեպատ դռանը: Երկինքը մոայ էր ու սև, հաճախկի կայծակի շանթերը ճեղքում էին մոայլ ու թուխ ամպամած երկինքը՝ լուսավորելով նաև խուճապահար եղած ծառերին, որոնք կարծես փորձում էին խույս տալ հողմի հարվածներին: Կայծակի հաճախակի որոտները կարծես գնալով քայլ առ քայլ մոտենում էին՝ լուսավորելով մութ ննջարանի խավար հատվածները: Փոթորիկը ավելի սաստկցավ, կարծես խելագար նժույգի պես դուրս էր պծել իր կապից ու սլանում էր՝ փնտրելով իր հանգստությունը: Կայծակի շանթերը մարտահրավեր էին նետել երկրին, փորձելով շանթահար հարվածներով վախեցնել նրան: Որոտի հուժկու հարվածից պատշգամբի դուռը բացվեց ու մրրիկը ներխուշեց ննջարան, նախ մարտի բռնվեց դռան վարագույրի հետ, որը համրի աղաղակող լեզվի պես շարժվում էր ու օգնութ-

յուն աղերսում: Գրասեղանին դրված թղթերը նույնպես խուճապահար պտտվում էին օդում, հետո ուժասպառ եղած ընկնում ու փնտրում մի խաղաղ անկյուն՝ պատսպարվելու համար:
Մահճակալին քնած մարդը դռան փեղկը բացվելուն պես ամիջապես վեր թռավ տեղից, շփոթված վառեց մահճակալի կողքին դրված լապտերը, որը հազիվ էր մահճակալը լուսավորում, քնաթաթախ տրորեց աչքերը, ուզում էր շտապել՝ փակելու բացված դուռը, հանկարծ կայծակի շանթահար որոտը նորից լուսավորեց սենյակը ու նա բացված դռան առջև նկատեց մարդկային մի կերպարանք՝ ստվեր, նա շփոթված նստեց տեղը, փորձելով խավարի մեջ տեսնել անցանկալի այցելուին, քնաթաթախ տրորեց աչքերը, կարծես չհավատալով իր տեսածին: Մրրիկն էլ կարծես հանգստացավ, վարագույրը նույնպես հանդարտվեց: Հիմա միայն մեղմ, հանգիստ շոյում էր ստվերի թիկնեղ թիկունքը: Մահճակալի վրա նստած շփոթված մարդը չէր հասկանում այդ ուշ ժամին այցելուի ով լինելը, սակայն սպասում էր մի բացատրություն լսել, սենյակում միայն լսվում էր պատից կախված ժամացույցի միապաղաղ թքտկոցը:
— Բարև Առաքել, — խոսեց ստվերը, — ամպրոպի ձայները կարծես հեռացավ, անձրևի կաթիլները ստվերի հայտնվելու պես կարծես մեղմացան, անձանոթը կամաց ծածկեց պատշգամբի դուռը՝ մեղմելով քամու մուտքը, — Առաքել, գիտեմ, որ չես վախենում, բայց կներես անակնկալ այցիս համար, — նորից խոսեց եկվորը:
Մահճակալին նստած Առաքելը տրորեց աչքերը, փորձելով խավարի մեջ տեսնել այցելուի դեմքը, սակայն մթության մեջ չէր երևում: Կարծես թե նա էլ չէր ցանկանում ցույց տալ իրեն, միայն նրա ստվերների մեջ հազիվ ուրվագծվում էր նրա սիլուետը:
— Բարև Ձեզ, — խոսեց Առաքելը, — կներեք այս վիճակիս համար, —շփոթված խոսեց նա, վերցնելով կողքին դրված ջրով լի շիշը, մի կում արեց, — կներեք իսկ ու՞մ հետ պատիվ ունեմ այս ուշ ժամին և այն էլ այս եղանակին:
Պատշգամբի պատուհանները սկսեցին խոշոր կաթիլներից թրմբկահարել, կարծես հարցը նրանց էր անհանգստացնում,

— Կներես Առաքել այս այցելությանս համար, հուսով եմ չեք նեղանա, որ անունով եմ դիմում Ձեզ, — ասաց ստվերը,
— Արդեն սովոր եմ,— կատակեց նա, — գուցե առաջ գաիք ու նըստեի՞ք, թե չէ այսպես. անհարմար է..
— Ասում ես անհարմա՛ր է, — հառաչանքով խոսեց ստվերը, — ի՞նչ հետաքրքիր բառ է, անհարմա՛ր է, — նորից կրկնեց, կարծես խորը ցավ էր ամփոփված այդ բառի մեջ, հառաչանք ու լալահառաչ մի ճիչ էր թաքնված այդ խոսքի մեջ: Առաքելը լռեց, սպասելով զրուցակցին, —անհարմար է, նորից կրկնեց նա, այս անգամ կարծես խեղդված ձայնով, ինչ որ բան կոկորդին դեմ առավ, դժվարացրեց շնչառությունը:
— Չգիտեմ ինչ առաջարկել, գուցե ջու՞ր, — շփոթված հարցրեց Առաքելը,
— Ծնորհակալ եմ Առաքել, այսպես հարմա՛ր է, — նորից նույն բառը, սակայն հեգնանք ու նզովք կար այդ խոսքի մեջ:— Գուցե ներկայանամ ու հեշտացնեմ մեր զրույցը, — ասաց նա ու առանց երկարացնելու ասաց իր անունը, — Ավո՝ Մոնթե...
— Մոնթե՞, — Առաքելը ցատկեց մահճակալից, ցանկացավ մոտենալ ու գրկել, սակայն Մոնթեն զսպեց, — խնդրում եմ նստիր, կարիք չկա...
Առաքելը շփոթվեց և նորից նստեց իր տեղը,
— Հարգելի հրամանատար, կներեք խնդրում եմ, — հանկարծ մտաբերեց Առաքելը, — հասկանում եմ, որ կորուստը Ձեր համար ավելի է, քան կարելի է պատկերացնել...
— Չէ Առաքել, կորուստը անդառնալի չէ, այլ ողբերգական, տաժանակիր ու անտանելի, մի՞թե հայ ազգը իր հայրենի հողի գինը չգիտի, մի՞թե հայ ժողովուրդը կարող է ամբոխից վերածվել հոտի, ինչ որ արեցիք, հիմա՛ հարմա՞ր է այսպես ապրել, հարմա՞ր է թուրքի մահակի տակ ճկոել, հարմա՞ր է անհայրենիք ու առանց արժանապատվության ապրել, մի՞թե չհասկացաք, որ հայրենիքի կորուստի հետ, կորելու են նաև եկող սերունդները ու հայի պատիվը: Դուք կոեցիք այն բոնության ու ստրկության շղթաները, որոնք դառնալու են ձեր տառապանքների անբաժան հատուցումը:

Գուցե այդպես հարմա՞ր է: Առաքել, ստրուկների մեջ կարող է Սպարտակ ծնուել, ստրկամիտների մէջ՝ երբեք, երևի հարմար է, որպեսզի ամբոխն ու ժեխը ձեզ կառավարի, իր քմահաճույքներն ու հեշտասիրությունները փաթաթի ձեր պարանոցին:
Ապականելով արժանապատվությունն ու հոգին... Մի՞թե բավական չէր հասկանալու համար հայրենի հողի գինը, որը ոռոգվեց ազնվորդիների արյունով, քանի՞ դար է հարկավոր որպեսզի հայ ժողովուրդը հասկանա մի բան, հայրենասիրության ու ազգադավության տարբերությունը, ստրկությունը, մտավոր կուրությունը դարձել են գաղափար ու առաջնորդվում եք դեպի դժոխք: Երևի այդպես հարմա՞ր է դժոխքում...
Նա լռեց, կարծես դժվարանում էր խոսել, անգամ մթության մեջ հասկանալի էր, որ նրա արցունքները ողողում են նրա այտերը, երևի հենց դրանից էր թաքնվում ստվերում, անգամ չփորձելով ցուցադրել իր դեմքը: Առաքելը հասկանում էր մեծ հրամանատարի վիշտը, այդպես թաքնված անգամ ինքը իրենից, կարողանում է արտահայտել իր վիշտը, ցասումը, բողոքը, ըմբոստ գաղափարի մարտիկի հոգին ճչում է ցավից, շղթայված առյուծի կորյունին, երբ մորթում են, նա մոնչում է անզոր, ցանկանում մեռնել իր կորյունից առաջ: Այդպես էլ Մոնթեն էր, իր միակ զավակը, որի համար ոչինչ չխնայեց, հայրենիքն էր նրա սիրասուն զավակը, նրա մայրը, նրա լեզուն ու միտքը, հիմա ամեն ինչ գահավիժեց դեպի դժողք:
— Չգիտեմ ինչ ասել հրամանատար, — լռությունը խախտեց Առաքելը, նա հուզված էր ու շփոթված,
— Դու մի ասա Առաքել, ես կասեմ, դու հիշիր, գիտեմ, որ դու կապ չունես այս ազգադավությանը, այս ամբոխի հետ, բայց գիտեմ, որ իմ վերջին խոսքս կհասցնես... Նա նորից լռեց:
— Բայց ի՞նչ եք կարծում հրամանատար, արժե՞ արդյոք հասցնել նրանց, — կարծես հարցը ավելի շփոթեցրեց հրամանատարին, երևի փոշմանեց իր այցելության համար, իր խոսքերը քարացան օդում, մթության մեջ անհանգիստ շարժում նկատվեց,
— Չգիտեմ Առաքե, երևի դու ինձանից ավելի լավ գիտես այդ ժող-

ովրդին…
— Հավատացեք հրամանատար, ոչ Ձեր խոսքը արժեք ունի, ոչ էլ մնացած մեծերի՝ Ռաֆֆու, Նժդեհի, Անդրանիկի, Կոմիտասի ու Մամիկոնյանի: Անգամ նրանք չկարողացան այս ազգին բան հասկացնել, կարծում եք Ձեր ասածը կարո՞ղ է ազդել նրանց վրա:
Նորից թանձր լռության մեջ ժամացույցի միապաղաղ թկթկոցը կարծես թմբուկի պես ոգևորված հարվածում էր ներկաների գըլխին, զրուցակիցը խորհում էր՝ փորձելով հասկանալ Առաքելի խոսքերի իմաստը,
— Երևի ճիշտ ես, — ցավով ասաց նա, — չգիտեմ ինչ ասել, — Ռաֆֆու, Նժդեհի ու մնացածի հետ շատ ենք զրուցել, նրանց այցերի ու քո մասին, երևի ճիշտը այն էր, որ չգաի…
Նորից լռություն, կարծես նա շանթահար կանգնել էր մութ սենյակում, ու չգիտեր շփոթված ինչ անել…
— Հրամանատար, բայց ճիշտ այն է, որ ասեք Ձեր ասելիքը, — խոսեց Առաքելը, — այլապես կստացվի ավելորդ էր Ձեր այցելությունը, գոնե ինձ ու Ձեր համար: Խոստանում եմ Ձեր ասածը հասցնել ազնվազարմ, արժանավոր հայորդիներին, հայկազյան դյուցազուն զավակներին, որոնք նույնպես հալածվում են այդ ամբոխի ձեռքով, սակայն Ձեր խոսքը կարող է նրանց համար ուղեցույց լինել… Այդ հայորդիներն են, որոնք գիտեն ոչ միայն հայրենիքի գինը, պատմության ու Մեծերի, այլև խոսքի արժեքը:
— Ծնորհակալ եմ Առաքել, դու երևի ճիշտ ես, — հաստատեց Մոնթեն, — պատահական չէր, որ քեզ հավատում էին քեզ այցելած մեր մեծերը,
— Ծնորհակալ եմ Հրամանատար…
— Լավ, ես կասեմ այն, ինչ պիտի ասեմ, իմ հոգում ու մեր մեծերի հանգստության համար, և դու ինքդ կորոշես, թե որ արժանավորին հասցնես մեր խոսքը:
— Սիրով հրամանատար, լսում եմ…
— Առաքել, հայ ժողովուրդը երևի ավելի մեծ « նվեր » չէր կարող մատուցել մեզ, քան Ծուշիի ու Քարվաճառի հանձնումն էր թշնամուն: Ծուշին թշնամու դրոշի պատվին, իսկ Քարվաճառն էլ իմ

ծննդյան օրվա։ Միտումնավոր ու դավադիր, դավաճանությունը այլ կե՞րպ է լինում... Հասկանում եմ, որ մենք նրանց աչքի գրողն ենք, մի՞թե այսքան նվաստացում ու ծաղրանքը քիչ էր, որ պատճառեցին մեզ, մի՞թե արյուն ու անհնազանդությունը պետք է ամբոխի սմբակների տակ նետվեր։
Ծաղրեցին մեզ այն ժամանակ, երբ Ազգադավին՝ սպարապետ կոչեցին, դրանով մի ծանր ժայռ դրեցին Արցախյան պատերազմի հերոս հայորդիների գերեզմանին, մի՞թե ազգադավի ներկայությունը հերոսաց հիշատակի պղծում չէ՞ր։ Մի՞թե չտեսաք այդ դասալիք ազգադավի զինակից ոհմակի հանցակիցներին՝ փրջոտ, անլվա, հայրենադավ ու գարշահոտ, որի գարշահոտությունից սփյուռքին էր անգամ խեղդամահ անում։ Աղդամը մեր հայրենիքը չէ, Շահումյանը ու Շուշին... Բայց երբևէ դուք հայրենիք ունեցե՞լ եք, ձեր հայրենիքը փողն ու որովայնն է թալանչի գանձագողե՛ր։ Հիշի՛ր արդարադատ աստվածների իմաստությունը, եթե ժողովուրդը գանձագողին ու ազգադավին չի պատժում, ապա արդյունքը սա է լինում։ Առաքել, Թեհլերյանն էր ուզում գալ, նրանից առաջ ես ճամփա ընկա։
— Հրամանատար, Թեհլերյանի գալը աննպատակ կլինի, — ցավով ասաց Առաքելը, — այս ամբոխի մեջ ո՛չ Թեհլերյանը կարող է բան փոխել, ո՛չ էլ...
Առաքելը լռեց, զգաց, որ երկարացնում է՝ ընդհատելով հրամանատարին,
— Ոչ էլ Աստված, — Մոնթեն ավարտեց Առաքելի կիսատ թողած խոսքը։ — Այո, ճիշտ ես, Աստվածն էլ անզոր է ապավինել ինքնասպանվողին, հոգով կույր ու դատարկամիտ ամբոխին բան հասկացնելը դժվար է, մեր ժողովրդի պատիժը հենց այդ տգետ ամբոխը՝ է, որը անգամ իր օգուտն ու վնասը չգիտե, այդպիսի զանգվածը ապականում է հայրենիքի հողն ու ջուրը, անգամ ընդերքը ու միջավայրը։ Քանի հոգիներ պետք է նահատակվեն, որպեսզի այդ ամբոխի քաղցը հագենա, տաս հազար, հարյուր հազար, գուցե միլիո՞ն։ Անկուշտ է հայ ժողովուրդը, ագահ, արծաթասեր ու անառողջ, ագահությունը կործանում է չտեսին ու մեր ժողովուր-

դը չտես է, սրբապիղծ ու փչացած։ Հեռուստատեսային ձեր շոուներով ապականել եք բարոյականության ու դաստիարակության խորհուրդը, ապականում եք վեհությունն ու անձնազոհությունը, հայրենասիրությունն ու ճշմարտախոսությունը։ Երբ երկրում սուտն ու կեղծիքն են թագավորում, հայհոյանքն ու սրբապղծությունը, այդ երկրում չի կարող արժեհամակարգ լինել, այդ երկիրը պետք է կործանվի, անկախ նրանից, թե դա իմ հայրենիքն է, թե ոչ։ Չարիքի որջը պետք է այրել, այլապես այն տարածվելու է ու ապականի մարդկությանը։ Առաքել, նախ պետք է մարդ լինել, իսկ նոր հետո հայ։ Հայը երբեք չկարողացավ հասկանալ իր առաքելությունը այս արևի տակ, Գաղափարը հայ ժողովրդին խորթ է, նրանց աստվածը Մամոնան է, նրանք որդեգրեցին Հուդայի ժառանգությունը՝ երեսուն արծաթը, քան Հիսուսի աստվածային ճըշմարտությունը։ Ասա արդյո՞ք Աստվածային պատվիրանները դա կրոնի ուսմունք է, թե՞ մարդկային արժեքների։

— Մարդկային ու երկնային արժեքներ հրամանատար…

— Ա՜յ տեսնում ես, դու հասկանում ես, մնացածը ոչ… Ի՞նչ է ասում առաջին պատվիրանը « Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար »։ Իսկ դուք ի՞նչ արեցիք, ոջլոտին կուռք ու աստված կարգեցիք, իսկ քոռ Լևոնին էլ՝ փրկիչ։ Երկրորդ պատվիրանը նույնպես պղծեցիք « կուռքեր չպիտի կերտես », բայց կերտեցիք կուռքերի շարք ու պաշտեցիք, Վանո, Վազգեն, Լևոն, Սերժիկ, Լֆիկ, Նիկոլ ու Ծառուկյան։ Երրորդ պատվիրանը չմոռացաք, ամեն վայրկյան, իսկ չորրորդը՝ ոտքի տակ տրորեցիք, հինգ ու վեցը անտեսեցիք՝ սպանեցիք ու ուրացաք, շնանալու պատվիրանը սրբագործիք, բռնաբարիք ու շնացաք սուրբ գավիթում մեր պապերի։ Եվ գողացաք սուտ մատնությունով ձեր մերձավորին, աչք տնկեցիք ու կողոպտեցիք ազնիվ մարդու ունեցվածքից։ Մեղսագործին հավատացիք ու երկիրը կործանելու շեփորները հնչեցրեցիք։

— Խոսքեր չեմ գտնում արդարանալ, — տխուր խոսեց Առաքելը,

— Դու ասում ես անհարմա՞ր է, — նորից հիշեց ասված բառը, այս անգամ կարծես ատելություն ու ցասում ժայթքեց բառի հետ,

ատ ամները սեղմած բերանից դուրս թռավ բառը, — իսկ հիմա թուրքի յաթաղանի տակ հարմա՞ր է, թուրքի բայաթու ու նրա ծաղրի ներքո, վախով քնել ու արթնանալը հարմա՞ր է, մեղքի զգացումը զոհերի հանդեպ... Երևի առանց արժանապատվության ավելի հարմար է, առանց հայրենիք ու առանց խղճի խայթ զգալու, Ամեն անգամ մեղավոր փնտրելով, այդպես էլ չցանկացան տեսնել նրան՝մեղավորին ու դավաճանին: Առաքել, մեղքը շատ ծանր բան է, երբ այն ծանրանում է հոգու վրա, ամեն ինչ դառնում է անիմաստ: Բանականությունից զուրկ երևույթները ու ապուշները չեն հասկանում դա: Երջանիկ ապուշները ապրում են անհոգ՝ չհասկանալով, որ ամեն մանրուքի մեջ է հայրենիքը՝ դպրոցի ու ուսման, գրքի ու պատմության մեջ է հայրենիքը, երգի, սիրո ու բարոյականության մեջ է հայրենիքը, եթե այդ ամենից մեկը պակաս է, հայրենիքը հիվանդանում է: Մի՛ զարմացիր, այո՛ Հայրենիքը հիվանդանում է, ինչպես մարդը, հայրենիքը խոսում է և ըմբոստանում, պայքարում է ու անգամ մեռնում: Բայց ցավոք սրտի շատերը չեն հասկանում, որ Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, մեռնում հայրենասիրության պակասի պատճառով:
Հայրենիքի արժեքը չիմացողը սրբապիղծ է, որովհետև այդպիսի մարդիկ չեն կարող որևէ լավ բան ստեղծել մարդկության համար: Ինչպես կասեր Ռաֆֆին «Հայրենիքի թշնամուն սպանելը մեղք չէ, թշնամուն չսպանելն է մեղք »: Իսկ դուք ինչ արեցիք, ներեցիք անգամ հայրենիքի դավաճանին, արդարացրեցիք նրա սրբապղծությունը: Չգիտեմ ցասումս արտահայտեմ, թե ողբս...
Նա ավարտեց խոսքը, հրաժեշտ տվեց, հետո շրջվեց, բացեց պատշգամբի դուռը ու դուրս գնաց, նրա մանր քայլերից հասկանալի էր, որ թիկունքին խրված դաշույններից անգամ անզգայնացել էր հոգին: Առաքելը նետվեց դեպի պատշգամբ, այնտեղ դատարկ էր, միայն կայծակի ճառագող լույսի տակ նկատեց հեռացող հրամանատարին, որի թիկունքին հարյուրավոր դաշույների ցցված դաստակներից հասկանալի էր դառնում, թե ինչու նա չհամարձակվեց առաջ գալ ու ցուցադրել իր դեմքը:
Հեռացավ նա, դավադիր դավաճանների դաշույններով թիկունք-

ին խրված։
— Գնաս բարով հրամանատար, ննջե՞ք խաղաղությամբ մեր հերոսներ, չնայած վստահ եմ անգամ գերեզմանում խաղաղություն չեք ունենալու, նիկոլի պես ոճրագործները անգամ մեր հերոսների հանգիստը դիվադադար արեցին, նրանց շիրիմները պղծեցին, նրանց թափած արյունը, նրանց կատարած անձնազոհությունը մի օծանելիքի արժեք չունեցավ, մի քոսոտ էժանագին ժամացույցի արժեք չունեցավ։ Ժողովուրդը իր ապերախտությամբ ու անտարբերությամբ հաստատեց ոճրագործի իշխանությունը, մինչդեռ այդ ոճրագործին պետք է բարձրացնեին ցցի, որպես ի ցույց բոլոր դավաճանների ու տականքների, ի ցույց աշխարհի, որ հայը գիտի իր արժեքների գինը, գիտի իր հերոսների ու հայրենիքի կարևորությունը։

Գեհենի Առաքել 10.02.2021

« Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը... Դժվար էր մեր ուղին, բայց նպատակը վեհ էր, իսկ դեպի վեհ նպատակ տանող ուղին հաղթանակ է »։ Մոնթեն Մելքոնյան»։

« Եթե Սփյուռքում իրավիճակը պահպանվի այնպիսին, ինչպիսին եղել է, մենք երբեք հաղթանակ չենք տոնի։ Եթե մենք շարունակենք վատնել մեր ռեսուրսներն ու եռանդը՝ մեր պատմական հայրենիքի վրա զինյալ ներկայություն ապահովելու փոխարեն, մենք բնավ հաղթանակի չենք հասնի։ Իմ նպատակն է կռվել Արցախի հաղթանակի համար, հանուն որի կյանքս ալ անգամ չեմ խնայե »։ Մոնթեն Մելքոնյան

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐԻ ՈՂԲԸ

«Ու վիշտը տվեց լեռներին: Եվ հառաչեցին լեռները ցավից,
Անեծք ժայթքեցին հրաբուխներով »:
Հովհաննես Շիրազ

Եվ ամպերի մեջ բազմած դիցուհին,
Սիրտը՝ ալեկոծ, արցունքն աչքերին,
ողբում էր ահա մրմունը սրտում,
ավերակ դարձած օջախնե՛ր բազում:
— Բարև, իմ քույրիկ, նորի՞ց ես ողբում,—
Հարցրեց Մասիսը սեգ Արագածին.
— Է՛հ, եղբայր իմ, ինչպե՞ս չսգամ,
չարիքն է բռնել իմ շուրջը համայն,
Ազգս տառապյալ գերի է հիմա,
— Մենք մեր բարձունքից՝ ամպերին հառած,
Տեսնում ենք, լսում, հո քար չե՞նք անձայն,
Երբ ժամանակին Արաքսից այն կողմ,
Լույսերի ծով էր՝ բյուր ու բյուրավոր,
Խաղաղ ննջում էր հայրենիքը մեր,
Եվ փառավորված բայց անգամ պանդուխտ,
Տունդարձն էինք օրհնում՝ օրը ցանկալի

— ճշմարիտ ասեմ, իմ դարիք եղբայր,
Լույսերի ծովը մնաց անցյալում,
Խավարամիտ ոհմակը ծածուկ,
ելավ մարդամեջ իր իսկ խոռոչներից,
Ազգադավների բանակը փոչոտ,
Պայքարը արդար թիրախ դարձրեց
հազար բյուրավոր օջախներ ավեր,
թափառ են դարձել աշխարհքում օտար,
Լույսի փոխարեն խավար է համակ,
Չարիքն է ելել որջից դժոխքի
Մահ ու տառապանք սփռելով ահա,
Բավ չէ՞ր մեզ համար եղեռնն անցյալի,
Նորից մահաբեր ջարդ ու կոտորած,
Օսմանցու որդիք դաժան են հիմա,
Քանզի գործում են մեր իսկ ցանկությամբ,
ու պատմությունը երբեք դաս չեղավ։
Հազար օղորմի մեծ Տիտաններին։
— Սիրելի՛ քույրիկ, մենք քեզ տեսնում ենք,
Չնայած հեռվում, բայց միշտ մոտիկ ենք,
Աստվածային պատկերը պայծառ,
Ապականեցիք ազգով ու ցեղով,
Ու արժանի ենք ինչ որ ցանեցինք,
ու տգիտությամբ այն հաստատեցինք,
ու չի լինելու հայերին երբեք,
ո՛չ երջանիկ օր, ո՛չ էլ լիություն,
Քանզի ապերախտ ու անշնորհակալ ենք,
այդպես է կամքը ոչ թե բարձրյալի,
Այլ օտարացած մի ողջ պամության,
Եվ օտարացած ազգուրաց ազգի։
Որ նախընտրեց դժոխքը գեհենի,
Քան իմաստնության լույսն Աստվածային։

Գեհենի Առաքել 16.10.2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ 1

ԶՈՐԱՎԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՄԱԿԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ.. 5

ՐԱՖՖՈՒ ԿՈՉ ՊԱՏԳԱՄԸ 10

ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՅՑԸ 18

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ..... 25

ՍՊԱՐԱՊԵՏԸ 46

ՆԺԴԵՀԻ ՆԶՈՎՔԸ..... 61

ՄՈՆԹԵ..... 67

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐԻ ՈՂԲԸ.....76

GEHENI ARAQEL © 2021

geheniaraqel@hotmail.com

Գեհենի Սոաքել